

Զօրակցինք Լիբանանահայության

Սիրելի Հայրենակիցներ,
Հայ Օգնութեան Միութիւնը կը շարունակէ իր աջակցութիւնը ցուցաբերել Լիբանանահայ գաղութի զաւակներուն, որոնք օր ըստ օրէ կը մխրճուին տնտեսական, ընկերային եւ ապրուստի ահաւոր պայմաններու մէջ: Լիբանանեան թղթուկի արժեզրկումը, երկրի մէջ տիրող սղաճը, դեղորայքի եւ ապրուստի հիմնական պէտքերու չգոյութիւնը անելի մատնած են Լիբանանի քաղաքացին:

Ի տես երկրի անկայուն իրավիճակին, ՀՕՄ-ը կրկին անգամ կոչ կ'ուզէ համայն հայութեան, որպէսզի իր աջակցութեամբ տէր կանգնի Լիբանանի հայահոծ գաղութի զաւակներուն, որոնք հետզհետէ երկրի վատթարացող ճգնաժամին հետեւանքով, կորսնցուցած են իրենց օրապահիկը:

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը, 2019-ին երկրին մէջ սկիզբ առած ճգնաժամէն ի վեր ճիգ չէ ինչպէս հոգալու լիբանանահայ գաղութին անմիջական պէտքերը՝ անոնց շաբաթական դրութեամբ տաք ճաշ, բժշկական անվճար ծառայութիւններ, ուտեստեղէն, կենցաղային հիմնական իրեր եւ տնային անհրաժեշտ պիտոյքներ տրամադրելով: Շնորհիւ ՀՕՄ-ի համակիրներու առատաձեռն նուիրատուութիւններուն, ցարդ ընդհանուր \$600,400 ամերիկեան տոլար հանգանկուած գումարը ամբողջապէս կը յատկացուի Լիբանանահայութեան անմիջական օժանդակութեան ծրագիրներուն:

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Ծրջանային Վարչութիւն

Զօրակցինք... Ծար. էջ 5

Հայկական իրաւական կենտրոնն Ատրպէյճանի կողմից սպանուած հայ ռազմագերիների գործով Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում սկսել է իրաւական գործընթաց

Ուաշինկթոնում գրանցուած Ար-դարութեան եւ մարդու իրաւունքների հայկական իրաւական կենտրոնը (ALC), համագործակցաբար ՀՀ-ում գրանցուած Միջազգային եւ համեմատական իրաւունքի կենտրոնի հետ, Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում նոր գործեր է ներկայացրել, որոնցով Ատրպէյճանը մեղադրւում է հայ ռազմագերիների եւ պատանդառւթեան մէջ գտնուող անձանց մահուան համար:

Մանրամասնութիւնները կարդալ՝ էջ 5:



31 նորագիրներ համալրեցին ՀՅԴ Գանատայի կառույցի շարքերը

Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն ընթացքին, Հ.Յ.Դաշնակցութեան 131-ամեակին առիթով, Գանատայի մէջ կազմակերպուեցան նորագիրներու երգման արարողութիւններ: Արարողութեանց ընթացքին, Գանատայի տարբեր շրջաններէ 31 նորագիրներ համալրեցին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը:

Երիտասարդները երգուեցան միշտ հաւատարիմ մնալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծրագրին, կանոնադրին եւ որոշումներուն, եւ ծառայել Հայաստանի ու հայութեան արդար դատին:

Նորագիրները հետեւած էին դաստիարակչական յատուկ ծրագրի, որ կ'ընդգրկէր կուսակցութեան պատմութեան, գաղափարախօսութեան եւ քաղաքական ուղեծրի բնագաւառները:

Արարողութեանց առաջինը կայացաւ Յուլիս 25-ին, խանասորի արշաւանքի օրը: Օրուան խորհուրդով՝ 31 նորագիրներու այս փաղանգը կոչուեցաւ «Խանասորի սերունդ»:

«Հորիզոն» հրատարակեց արեւմտահայերէնի վերծանուած Թադէոս Յակոբեանի «Պատմական Հայաստանի քաղաքները» ուսումնասիրութիւնը

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ



Կարդալ էջ 3



BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանէկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



«Հորիզոն» հրատարակեց արեւմտահայերէնի վերծանուած Թադեոս Յակոբեանի «Պատմական Հայաստանի քաղաքները» ուսումնասիրութիւնը

Մոնթրեալի TLC Global հրատարակչատան կողմէ լոյս տեսաւ պատմաբան Թադեոս Յակոբեանի «Պատմական Հայաստանի քաղաքները» ուսումնասիրութիւնը արեւմտահայերէն վերծանումով:

Պատմաբան Թադևոս Յակոբեանի այս աշխատությունը կը հանդիսանայ այն միակ հազուագիւտ աղբիւրը, ուր մէկ հրատարակութեան մէջ համախմբուած կրնանք գտնել Պատմական Հայաստանի, Արեւմտահայաստանի 72 հայկական բնակավայրերու տեղագրութիւնը:

Գիրքին մէջ ներառուած են Հայկական բարձրաւանդակի այն բնակավայրերը, որոնք մաս կը կազմեն Մեծ Հայքին եւ կարգ մը բնակավայրեր Փոքր Հայքէն:

Գիրքի հեղինակը, ոչ միայն հայկական քաղաքներու տեղագրությունն է որ ուսումնասիրած է, այլև՝ յատուկ նախաբանով մը, պատմական յետադարձ ակնարկով ներկայացուցած է նշեալ տարածաշրջանի հայկական բնակավայրերու գլխաւոր պատմական իրադարձություններու ժամանակագրությունն ու ընկերային-տնտեսական պայմանները:

Գրքի արեւմտահայերէնի վերծանման խմբագրական աշխատանքներու գլխաւոր խմբագիրն է Վահագն Գարագաշեան, խմբագիրներ՝ Յարութիւն Պէրպէրեան եւ Նորա Բարսեղեան, իսկ սրբագրիչներ՝ Սոնա Թիթիգեան եւ Քրիստափոր Միքայէլեան:

Գիրքը ունի ներդիր տեղագրական քարտեզ:

Պատմաբան, աշխարհագրագետ, պատմական գիտությունների դոկտոր, փրոֆեսոր Թադևոս Յակոբյան 1963-ին ստացած է պատմական գիտությունների փրոֆեսորի կոչում, իսկ 1968-ին՝ Խորհրդային Հայաստանի Հանրապետության գիտությունների փրոֆեսորի կոչում: Մահացած է 1989 Հոկտեմբեր 16-ին: 2013 Հոկտեմբեր 25-ին Երևանի Պետական Համալսարանի երկրաբանությունից բաժանմունքին մեջ բացուած է լսարանի իր իշխատակին:

Թաղեւոս Յակոբեանի հիմնական ուսումնասիրություններն ու աշխատություններն-
ը կը վերաբերին Հայաստանի պատմական աշխարհագրությունեան եւ քաղաքներու
պատմութեան: Գրած է զատազիւրքեր Բարձրագոյն Ուսմանց Հաստատութիւններու եւ
դպրոցներու համար, կազմած է Հայաստանի քարտէսը (ՆՔ 2-րդ դար - ՆՔ 5-րդ
դարու սահմաններով):

Իր աշխատութիւններէն են.

Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ 1, Երեւան, 1951, 189 էջ:

Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ 2, Երեւան, 1952, 272 էջ:

Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ 3, Երեւան, 1953, 344 էջ

Երեւանի պատմութիւնը (1801-1879 թթ.), Երեւան, 1959, 672 էջ:

Ուրուագծեր Հայաստանի պատմական աշխարհագրութեան, Երեւան, 1960, 480 էջ:

Երեւանի պատմութիւնը (1879-1917 թթ.), Երեւան, 1963, 608 էջ:

Սիւնիքի թագաւորութիւնը (պատմա-աշխարհագրական առումով), Երեւան,

1966, 220 59:

Երեւան - 2750 (ՆՔ 782 - ՔԵ 1968 թ.), Երեւան, 1968, 421 էջ:

Հայաստանի պատմական աշխարհագրութիւն (ուրուագծեր), 2-րդ հրտ., Երեւան,

1968, 509 52:

Երեւանի պատմութիւնը (հնագոյն ժամանակներէն մինչեւ 1500 թուականը),

Երևան, 1969, 432 էջ:

Երեւանի պատմութիւնը (1500-1800 թթ.), Երեւան, 1971, 524 էջ:

ՆՐԵԼԱՆԻ զարգացումը Արեւելեան Հայաստանը Ռուսաստանին միանալէ յետոյ

(*փաստաթուղթներու ժողովածու 1801-1917 թթ.*), *կազմող՝ Թադևոս Յակոբեան, Երեւան, 1978, 492 էջ*:

Անիի պատմությունը, գիրք 1 (Հնագույն ժամանակներէն մինչեւ 1945 թուականը), Երեւան, 1980, 416 էջ:

«Հորիզոն»ի հարցազրույցը Գանատայի
տնտեսութեան զարգացման եւ պետական լեզուներու
նախարարուհի Մելանի Ժոլիի հետ



Շաբաթ, 14 Օգոստոս 2021-ի, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ տարեկան քերմէսի ընթացքին, «Հորիզոն» թղթակից Թալիա Ճապրայեան հարցազրոյց մը ունեցաւ Գանատայի տնտեսութեան զարգացման եւ պետական լեզուներու նախարարուհի Մելանի Ժոյիին հետ: Հարցազրոյցի ընթացքին արծարծուեցան զանազան հարցեր, որոնց շարքին՝ Ազատական կուսակցութեան նախընտրական արշաւի մանրամասները յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն լոյսին տակ, գանատահայ համայնքին դերն ու տեղը երկրի զարգացման գործընթացին մէջ՝ հայ-գանատական երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ գանատական դեսպանատուն հիմնելու հարցերը:

Հայ համայնքին հետ երկար տարիներու աշխատանքային յարաբերություններուն շնորհիւ, նախարարուհին այժմ ինքզինք իր զգալի օրակազմ հայ համայնքի բարեկամ անդամ: Հարցազրույցին մէջ ան մասնաւորապէս ողջունեց Հայ համայնքի հաստատութիւններուն կազմակերպութեան թիւնն ու աշխատելաճի բարձր մակարդակը:

Նախարարուհին կարեւորեց Սթեֆան Տիոնի Հայաստանի մօտ Գանատայի յատուկ դեսպանորդ պատուիրակ նշանակուելու փաստը, ընդգծելով Հայաստանի հետդիւանագիտական յարաբերութիւններու զարգացման կարեւորութիւնն ու Գանատայի օժանդակութիւնները Հայաստանին:

Հարցազրույցը սփռուեցաւ առցանց:

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
Ղերձակութեան "Arthur Montreal"
հաստատութիւնը կարիքը ունի ղերձակներու,
կարողներու եւ ձեռողներու: Հետաքրքրուողները
կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին:
Վարժանք արհեստի

TAILORS & SHIRT MAKERS NEEDED
"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers
are looking for experienced seamstress, cutters
and tailors. If interested, please call 514-843-0522.
Training will be provided.

 Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com 	 ALBERT ARKILANIAN (Courtier immobilier résidentiel) Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 <i>"Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!"</i> 	 HONDA GABRIEL 7000, boul. Henri-Bourassa Est Montréal-Nord, QC H1G 6C4 www.hondagabriel.com Tro Bachekjian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachekjian@gabriel.ca Tél : 514 327-7777 Poste : 4139 Télé. : 514 262-8019 
 École De Conduite Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	 Hôtel du Parlement/ Parliament Building 1045, rue des Parlementaires Bureau/Office 3.21 Québec (Québec) G1A 1A4 Tél./Phone 418 644-4050 Bureau de circonscription/ Riding Office 4599, boulevard Samson, bur. 201 Laval (Québec) H7W 2H2 Tél./Phone 450 686-0166 Télé./Fax 450 686-7153 Guy.Ouellette.CHOM@assnat.qc.ca assnat.qc.ca	BRING YOUR OWN WINE  550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	 ՀԱՅԿ ԽԱՐԹՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000 	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Գլխաւոր գործօնը ժողովուրդն է

19-րդ դարի վերջերին հրապարակ իջած հայկական առաջին կուսակցութիւնները, որդեգրելով հայութեան եւ Հայաստանի ազատագրութեան գաղափարներ, իրենց վերջնանպատակին հասնելու կարեւոր պայման էին համարում ժողովրդի լուսաւորութիւնը: Նրանք տեսնում էին, որ անկիրթ ու չլուսաւորուած հասարակութիւնը զուրկ է ոչ միայն ազատութեան ու անկախութեան ձգտումից, այլեւ արժանապատուութեան զգացումից: Իր ստրկական գոյութիւնը նա համարում է իրենից վեր ուժերի նախանշած ճակատագիր եւ կամագուրկ հնազանդութեամբ կրում է այդ «ճակատագրի» բոլոր հարուածներն ու անիրաւութիւնները: Այդպիսի հայը, ունակ չլինելով ըմբռնելու իրեն պատուհասող մշտական ողբերգութիւնների խորքային պատճառները, երբ սեփական բնօրրանում քոչուոր նուաճողի ճորտն է, երբ եկուորը սեփական քամահաճոյքով կարող է խլել նրա հողը, տունը, պապենական ինչքը, «կինն ու աղջիկը», բնականօրէն անընդունակ է նաեւ ընդվզելու այդ պարտադրուող իրողութիւնների դէմ: Մեր առաջին մեծ յեղափոխականներից մէկը՝ Միքայէլ Նալբանդեանը, «Մանկութեան օրեր» բանաստեղծութեան մէջ գրում է.

«Գիտակցութիւնը յաջորդեց սուրան,

Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս»:

Ակնյայտ է այն միտքը, որ ազգի վիճակի ըմբռնումն ու դրանից ծնուած ապրումները ի յայտ են գալիս, երբ անձը գիտակցութիւն է ձեռք բերում: Աբովեանի, Պատկանեանի, Նալբանդեանի, Բաֆֆու եւ միւս լուսաւորիչների ցանած կայծերից ծլարձակեց ու տարածուեց ազգային-յեղափոխական շարժումը, որը, երեսնամեայ պայքարի ճանապարհ հաղահարելով, յանգեց հայութեան եւ հայոց հայրենիքի մնացորդացի փրկութեանը:

Կեանքը փաստել եւ փաստում է, սակայն, որ կրթութեան, ազգային ու բարոյական դաստիարակութեան գործը կամ, լայն առումով, լուսաւորչական առաքելութիւնը պէտք է լինի ժողովրդի գիտակցութիւնը խաւարի մէջ խաբխափումներից, կեղծ նախապաշարումներից եւ արժէքներից զերծ պահելու յարատեւ աշխատանք:

Վերն ակնարկուած երեսնամեայ

պայքարի շնորհիւ վերականգնուած հայոց պետականութեանը պատուհասեցին աղէտներ, որոնք նոյնպիսի «հիւանդութեան» հետեւանք էին: Բախտորոշ 1919 թուականին, երբ հայոց մէկամեայ պետութիւնը յաղթահարում էր սովն ու համաճարակը եւ ոտքի էր կանգնում, երբ զբաղուած էր թուրք-թաթարական ու քրդական ներքին խռովութիւնները ճնշելով, հայութեան անառակ զաւակները Ռուսաստանից ու Կովկասից Հայաստան ներմուծեցին բուլշեւիզմի վերագալին վարդապետութիւնն ու նպատակները: Ազգային ազատագրութեան գաղափարախօսութեանը, որը սեփական ինքնութեան ու պետականութեան կայացման հիմքն էր, հակադրուեց դասակարգային գաղափարախօսութիւնը: Պատերազմներից, կոտորածներից, սովից ու համաճարակներից ուժասպառ ժողովրդին փորձ արուեց համոզելու, թէ իր թշնամին թուրքը չէ, օտարը չէ, այլ նա, ով տասնամեակներ շարունակ առաջնորդել է իրեն հրի ու սրի միջով եւ այժմ էլ փոթորիկների միջով վարում է իր պետութեան դեկը: Այս թիրախաւորուած քարոզչութիւնը ազգային բուրժուազիայից, դասակարգերից ու սոցիալական պայքարներից զերծ երկրում դժբախտաբար յաջողուեց ցցել պէս տարածել յատկապէս զէնքը վայրէջքած գինուորականութեան շրջանում: Փրկուեցին օրէջօր ամրապնդուող ու մեծացող, պատմական մեծագոյն հեռանկարներ փայփայող երկրի հիմնասիւնները, թուրքի ու բուլշեւիկի հետ գործակցած հայ դաւաճաններին յաջողուեց կործանել ամէն ինչ, մասնակցել երկրի մաս-մաս վաճառքին եւ նրա՝ փոքրացած, բուլշեւիկեան մուրճի ու թուրքական սալի արանքում կքած հատուածը յանձնել օտարի եւ նրա տեղական խամաճիկների կառավարմանը:

Պատմութիւնը վերլիշելու համար չէր այս անդրադարձը, այլ փաստելու, որ մէկ անգամ ապրուածը դժբախտաբար նաեւ կրկնուում է: Այն, ինչ տեղի ունեցաւ Հայաստանում հարիւր տարի անց, ազգային ողբերգութեան սցենարի վերախաղարկումն էր:

Անկախացած եւ ազատագրուած Արցախի հետ պատմական նոր հորիզոնների առջեւ գտնուող երկրում յաջողուեց զանգուածային գիտակցութեան յեղաշրջում իրականացնել եւ պայքարի սլաքն ուղղել դէպի ներս:

Պետութեանը իր հիմնական խնդիրներից, արտաքին մարտահրաւէրներից չեղելը, այսպէս կոչուած, նախկին թալանչիների դէմ ներքաղաքական հալածանքների սանձագերծումը այլ բան չէին, քան դասակարգային պայքարի սաղորում, ինչն այսօր էլ բախտախնդիր կառավարողների համար շարունակում է համարուել առաջնահերթութիւն: Միւս կողմից՝ իր չդադարող ներքին «յեղափոխութեան» պատճառով երկրի մէկ քառորդը կորցրած, հազարաւոր անմեղ մահերի պատճառ դարձած իշխանութիւնը, դեռ ռազմադաշտի վերածուած տարածքներից իր դիակները չհաւաքած, գերիներին չազատած, երկրի սահմաններից թշնամու շարունակուող ներթափանցումը չկասեցրած, առիթ ու անառիթ յայտարարում է պատերազմ պարտադրած թշնամու հետ բարեկամութեան, տնտեսական յարաբերութիւնների եւ երկրի հաղորդակցական ուղիները նրա ծաւալապաշտական ծրագրերի առջեւ բացելու մտադրութեան մասին: Շարունակուող ներքին հալածանքների պայմաններում թուրք-արեւմտեան թեկադրանքին ենթակայ իշխանութիւնը բացարձակապէս անտարբեր է գրաւեալ Արցախի ճակատագրի նկատմամբ, իսկ իր ղեկավարած պետութեան սահմանների պաշտպանութիւնը պատրաստ է յանձնելու ցանկացած օտար պետութեան: Իսկ ժողովուրդը, որի ուսերին հեծած նա շարունակում է պահպանել իր իշխանութիւնը: Ժողովրդի իշխանապաշտ հատուածի մէջ են նրանք, ովքեր նոյն իշխանութեան թողտուութեան պատճառով դարձել են բնաւեր կամ սեփական բնակավայրում յայտնուել են դարաւոր թշնամու թակարդում, նրանք են, ովքեր խոնարհուում ու համբուրում են այն ձեռքերը, որոնք թաթախուած են իրենց ու իրենց ազգի զաւակների արեան մէջ:

Երբ թէկուզ անհատ անձինք կարող են թոյլ տալ իրենց բարձրաձայնել, թէ ազատուել ենք Արցախի բեռից, երբ գլուխ են բարձրացնում հայութեան այս կամ այն հատուածի նկատմամբ իրենց անբարիպաշտութեան մասին խօսողներ, իսկ երկիրը պարտութեան տարած եւ շարունակուող անկումը կասեցնելու անընդունակ արկածախնդրները շարունակում են իրենց կործանարար կառավարումը, նշանակում է, որ իրջօրէն խաթարուած են տուեալ ժողովրդի ազգային ինքնագիտակցութիւնը եւ ինք-

նապաշտպանական բնագրը: Երբ դասակարգային պայքարի պղտոր ջրերում յայտնուած զանգուածների համար ցեղասպան թուրքն աւելի հանդուրժելի է, քան իրենց երկրի նախկին իշխանաւորները, պէտք է հասկանալ, որ երկիրը գնում է պետականութեան կորստի, իսկ նոյն ժողովուրդը՝ ինքնառչնչացման:

Իրողութիւնն այն է, որ բոլոր պարագաներում գլխաւոր գործօնը ժողովուրդն է, որովհետեւ թէ՛ նուիրեալները եւ թէ՛ տականքը մշտապէս եւ ամենուր լոյս աշխարհ են գալիս, իսկ ժողովուրդը որոշում է, թէ ում նախապատուութիւն տալ: Իրականութիւնը պէտք է փոխուի, ինչպէս 1918 եւ 1988 թուականներին, բայց իրականութիւնը հնարաւոր չէ փոխել՝ ժողովրդին փոխարինելով մէկ ուրիշով:

Հայ ժողովուրդը այս միակն է, եւ մնում է վերափոխել նրան կամ, այլ խօսքով, լուսաւորել նրա մթագնած ու աղաւաղուած գիտակցութիւնը, արթնացնել նրա ազգային ինքնագիտակցութիւնը, յիշողութիւնը, արժանապատուութիւնն ու ըմբոստ ոգին: Յետպատերազմեան եօթ ամիսների պայքարի ընթացքում յաջողուեց այդ յեղաշրջումը առաջ բերել հսկայական զանգուածների շրջանում, բայց, վախենալով այդ ընթացքից, խորամանկ ու նենդ ինքնակոչը կանխեց զարգացումները՝ կազմակերպելով վաղաժամ ընտրութիւններ: Հնարաւոր դարձաւ ուժեղացող ազատագրական պայքարը ժամանակաւորապէս շեղել իր ուղուց, բայց հնարաւոր չէ կասեցնել դրա օրինաչափ ընթացքը ընդհանրապէս: Լուսաւորչական ու դաստիարակչական ջանքերի շնորհիւ զանգուածների գիտակցութիւնը պէտք է ազատագրուի հայրենադաւ եւ հակահայ ուժերի գերութիւնից: Այդ աշխատանքի ոչ գլխաւոր, բայց կարեւոր ամբիոնը կարող է դառնալ խորհրդարանը: Կրկնենք եւս մէկ անգամ, որ մրցակցութիւնը քաղաքական ուժերի մէջ չէ, այլ քաղաքական նպատակների՝ կը կասեցուի, թէ՞ կը շարունակուի հայ ժողովրդի եւ հայոց պետականութեան կործանումը: Հայութեան ներկայ սերունդները կանգնած են անցեալի ու ապագայի առջեւ պատմական պատասխանատուութեան յանդիման:

«Դրօշակ»-ի Խմբագրական

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 ALEPPO KEBAB Rest. Chef Zak Cell: 647-323-5950 416-701-9191 1960 Lawrence Ave. E., Scarborough, ON M1R 2Z1 (Lawrence and Tower Dr) www.aleppokebab.ca	 Crown Pastries حبات النخ Fine Middle Eastern Pastries Like us on   crownpastriesbaklava.com
 ARZ fine foods The Essence of Mediterranean Gourmet Since 1989 Website: arzfinefoods.com Email: info@arzfinefoods.com Scarborough Location 1909 Lawrence Ave E, Scarborough, ON M1R 2Y6 (416) 755-5084 Mississauga Location 720 Bristol Rd W, Mississauga, ON L5R 4A5 (905) 502-9292	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	 I.D.A. Part of the <i>Apothecary</i> family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian	 Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048
ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164		

Հայկական իրաւական կենտրոնն Ատրպէճանի կողմից սպանուած հայ ռազմագերիների գործով Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում սկսել է իրաւական գործընթաց

Ուաշինկթոնում գրանցուած Ար–դարութեան եւմարդու իրաւունքների հայկական իրաւական կենտրոնը (ALC), համագործակցաբար ՀՀ–ում գրանցուած Միջազգային եւ համեմատական իրաւունքի կենտրոնի հետ, Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում նոր գործեր է ներկայացրել, որոնցով Ատրպէյճանը մեղադրւում է հայ ռազմագերիների եւ պատանդաւորեան մէջ գտնուող անձանց մահուան համար։ ՄԻԵԴ–ի ներկայացուած փաթեթում նշւում է՝ թիւով 19 անձինք, ինչպէս իրենց հայրենի բնակավայրերում մնացած քաղաքացիական մարդիկ, այնպէս էլ զինուորականներ, միմեանցից տարբեր 10 միջադէպերի արդիւնքում սպանուել են, երբ գերութեան մէջ են գտնուել ատրպէյճանական ուժերի կողմից կամ եղել են ձերբակալուած։ Դիմումները ներկայացուել են ականատեսների ցուցմունքների, համաքանցում տարածուած տեսաձայնագրութիւնների, դատաբժկական փորձաքննութիւնների անհերքելի ապացոյցներով եւ փորձագիտական եզրակացութիւններով։

Երկու իրաւապաշտպան կազմակերպութիւնները հաւաքուած նիւթերով փորձում են պատասխանատուութեան ենթարկել Ատրպէյճանին՝ ինչպէս Մարդու իրաւունքների եւրոպական կոնվենցիայի, այնպէս էլ միջազգային հումանիտար իրաւունքի համաձայն՝ գերութեան մէջ գտնուող անձանց կեանքը չպաշտպանելու համար։

«Ձկարողանալով պաշտպանել գերութեան մէջ գտնուողների կեանքը եւ չկարողանալով հետաքննել սպանուած գերիների հարցերը, Ատրպէյճանը խայտառակ կերպով խախտում է մարդու

իրաւունքներն ու չի կատարում Մարդու իրաւունքների եւրոպական կոնվենցիայով ստանձնած իր պարտաւորութիւնները։ ՄԻԵԴ–ի եւեւրոպական բոլոր յարակից կառոյցների պարտականութիւնն է միանշանակ կարմիր գիծ քաշել եւստիպել Ատրպէյճանի բռնապետութեանը պատասխանատուութիւն ստանձնել», – ընդգծում է Հայկական իրաւական կենտրոնի նախագահ Քէն Խաչիկեանը։

Հայկական իրաւական կենտրոնը յանձնառու է սպանուած 19 անձանց դէպքերով հետապնդել արդարութիւն, ինչպէս նաեւ ապահովել, որ բոլոր հայ ռազմագերիներն ազատ արձակուեն եւառանց վնասների հայրենադարձուեն։ Այս նպատակով Ուաշինկթոնում տեղակայուած հայկական իրաւական կենտրոնը համագործակցում է Երեւանում գտնուող Միջազգային եւհամեմատական իրաւունքի կենտրոնի հետ՝ առաւել քան 100 հայ ռազմագերիների անունից ՄԻԵԴ–ում գործեր յարուցելու համար։ Այսպիսով, այս գործընկերութիւնը թոյլ է տալիս անհատական մակարդակով պաշտպանելու Ատրպէյճանում գտնուող հայ ռազմագերիների կէսից աւելիին։ Համագործակցող կազմակերպութիւնների ջանքերով վերջերս նորից լրացուցիչ գործեր ներկայացուեց ՄԻԵԴ՝ պահանջելով Ատրպէյճանի հանդէպ կիրառել միջանկեալ միջոց։ Մշտական աշխատանք է տարւում Ադրբեջանի կողմից պահուող այլ ռազմագերիների վերաբերեալ հետաքննութիւն անցկացնելու եւբացայտումներ անելու ուղղութիւններով, հետամուտ լինելու ինչպէս նրանց ազատութեանը, այնպէս էլ կեանքի իրաւունքին։

Հայկական իրաւական կենտրոնը

հրապարակել է այն անձանց անուն–ազգանուններն ու սպանութեան դէպքերը, որոնց առնչութեամբ սկսուել է իրաւական գործընթաց։ Հաշուի առնելով սպանութեան դէպքերի առանձնակի դաժան բնոյթը՝ դրանց վերաբերեալ տեղեկատուութիւնը թարգմանաբար չենք հրապարակում։

Ատրպէյճանական վարագութիւնների արդիւնքում գերութեան մէջ սպանուած մեր հայրենակիցներն են Վահրամ Լալեանը, Վոլոդիա Աղաբէկ–

եանը, Արսէն Ղարախանեանը, Եուրի Աղամեանը, Բենիկ Յակոբեանը, Մուշեղ Մելքումեանը, Նարեկ Բաբայեանը, Գեոդի Պետրոսեանը, Եուրիկ Ասրիեանը, Սարգիս Մանուկեանը, Լուգֆիկ Ավդալեանը, Սենիկ Խուրշուդեանը, Յուսիկ Յովակիմեանը, Կարէն Ներսիսեանը, Հայկ Յարութիւնեանը, Ալբերտ Ստեփանեանը, Գրիշա Գրիգորեանը, Սասուն Պետրոսեանը, Սամուէլ Սմբատովը։

ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի կենտրոնական գրասենեակ

Զօրակցի՛ք... Սկիզբը էջ 1

գործադրման։

ՀՕՄ–ի Գանատայի շրջանը \$ 94, 500 տոլարով մասնակցեցաւ այս նուիրահաւաքին։

Ահաւասիկ տարի մը անցած է Օգոստոս 2020ի ահաւոր պայթումէն, սակայն Լիբանանահայութիւնը այսօր, աւելի քան երեք մեր նիւթական աջակցութեան կարիքը ունի։ Հետեւաբար, առաջին հանգրուանով, ՀՕՄ–ը կը նախաձեռնէ \$100 ամբրիկեան (130 գանատական) տոլար յատկացնել ահաւոր պայմաններու մէջ ապրող մեր հայրենակիցներուն։ Առ այդ, կը դիմենք ՀՕՄ–ի մեր անդամներուն, բարերարներուն եւ համակիրներուն, որպէսզի մասնակից դառնան այս նախաձեռնութեանը։ Լիբանանի Կողքին դրամահաւաքին ձեր ներդրումը բերելով կրնաք ընտանիքի մը անմիջական ապրուստը ապահովել։

Ձեր նիւթական օժանդակութիւնը կրնաք ուղարկել.–

1)Վճարագրով՝ ARS Foundation–ին, հետեւեալ հասցէին՝

Armenian Relief Society of Canada

3401 Olivar Asselin, Montreal, QC, H4J 1L5

2)Այցելելով ՀՕՄի Գանատայի Շրջանի կայքէջը՝ <https://ars-canada.ca/donations/>

սեղմելով Donate Now կոճակը, ապա ընտրելով Aid to Lebanon fund–ը։

3)Etransfer ով, ՀՕՄի Շրջ. Վարչութեան ել–նամակի հասցէին՝ ars-canada@bellnet.ca

Բոլոր պարագաներուն կը խնդրենք նշել թէ՝ դուք ձեր նուիրատուութիւնները կը կատարէք Լիբանանի Օժանդակութեան,– AID FOR LEBANON

Վստահ ենք որ անգամ մը եւս Գանատայի մեր հայրենակիցները անվերապահօրէն պիտի աջակցին Լիբանանահայութեան դրամահաւաքի օժանդակութեան աշխատանքներուն։



«ԲԱՍՏՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D'ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2021-2022 ուսումնական տարեշրջանի համալսարանական կրթաթոշակի դիմումնագրերը պիտի ընդունուին մինչեւ `1 Նոյեմբեր 2021

Թեկնածուն պարտի ըլլալ`

- Համալսարանական ուսանող` Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի։
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունեայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս։
- Շրջանաւարտ` Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը։ Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները` շրջանաւարտ կը նկատուին։



Բարեհաճեցէ՛ք 2021-2022 տարեշրջանի դիմումնագրերը պատուիրել կապուելով հետեւեալ ե-նամակի հասցէին` pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ ե-նամակով ուղարկուած դիմումնագրերը, պահանջուած փաստաթուղթերով ։

Ո՞ւր կ’երթայ Հայաստանը եւ ի՞նչ է մեր դերը

Առաջին հերթին՝ անկրկնելի Վա–հանին բառերով, «կասեցնել մայրամու–տը»։ Որ կը նշանակէ, թէ Հայաստանը կ’ընթանայ դէպի «մայրամուտ», ու ա՛յդ է, որ կ’ուզէ կասեցնել Հ.Յ.Դաշնակ–ցութիւնը։

ՔԻԶ ՄԸ ԵՏԵԻ

Բողոքի ալիքը, որ ծայր առաւ Հա–յաստանի մէջ Նոյեմբեր 9ի յանձնուո–ղական–պարտուողական յայտարարու–թենէն վերջ, շատերու մօտ (այսօրուան դրութեամբ) ստեղծած է այն տպաւորու–թիւնը, որ կարծէք ամէն ինչ «տանելի», «բնականոն», «հասկնալի» ու «ընթա–ցիկ» էր երկրին մէջ՝ մինչեւ Սեպտեմբեր 27ը․ մինչեւ պատերազմին սկսիլը։ «Հարց չէր», որ վարչական ապիկարու–թիւնները ներքուստ կրծեցին պետական վարչամեքենան՝ մաքստան սովորական պաշտօնեան «ոտքի վրայ» գործէ արձա–կելու ազդանշանով, դատարանները չըջափակելով, դատաւորներու հասցէին անուանարկումներով, Արցախի ազա–տագրական պայքարի ղեկավարները սուտ գրպարտութիւններով դատարան–ներ քաշկուտելով, «ասֆալտին փռելու», «թաթիկներ կտրելու» մանկամիտ սպառնալիքներով, «կոռուցիլայի» դէմ պայքարի մեծաշուինդ յայտարարու–թիւններով ու հեւտորաբանութեամբ (հոգ չէ թէ մինչեւ այսօր ոչ մէկ դատա–կան վճիռ կայ), անդադար տեսարաններ բեմադրելով (ու դեռ մինչեւ քանի մը օր առաջ Գորիսի մէջ), արտաքին յարաբե–րութիւններու մէջ մանկամիտ վերաբե–րումներով («աշխարհը պէտք է հաշտուի նոր Հայաստանով») եւայլն։

«Սիրոյ եւ համերաշխութեան» խօսքերուն ընկերացան հանրութիւնը երկփեղկելու, ներքին թշնամանքի խրա–մատներ ստեղծելու ու խորացնելու բա–ցայայտ քայլեր, որոնք մտածուած վար–

քագիծ մը կը հետապնդէին։ Տարբեր բան կարելի՞ քա ակնկալել երկրի գործադիր իշխանութեան ղեկը զաւթած (ներողու–թիւն… «լեզիտիմ» կերպով ընտրուած) մարդէն, որ 2008ի Մարտի 1ի դէպքերուն ի լուր աշխարհին կը յայտարարէր. «Մեր մայրաքաղաքը պէտքա մաքրենք դարա–բաղցի տականքներից»։ Տարբեր բան կարելի չէր սպասել անձէ մը, որ խմբագ–րական աշխատանքը վերածած էր հաա–րակ դրամաշորթութեան՝ գումարներու դիմաց յօդուածներ լոյս ընծայելով, կամ… չընծայելով։ Այդքան գոեհիկ։

Տակաւին չենք խօսիր բանակէն ու ապահովական զգայուն կառոյցներէն ներս պատասխանատուներու, հրամանա–տարներու, տնօրէններու անդադրում փոփոխութիւնները, յաճախ ալ ապիկար–ներու նշանակումները՝ զգայուն պաշ–տօններու վրայ (Արգիշտի Քյարամեանի, կամ Արմէն Գրիգորեանի նմանները, օրինակ), որոնք թուլացուցին տուեալ բո–լոր կառոյցները, իրենց հետ տկարացնե–լով ամբողջ պետական համակարգը, բայց մանաւանդ՝ պետութեան պաշտ–պանուճակութիւնը։

Հապա՞ Ստեփանակերտի հրապա–րակին վրայ «Արցախը Հայաստան է եւ վե՛րջ» գոռոցը, որ ինքնին ափսէի վրայ Պաքուին հրամցուած խաղաքարտ մըն էր ։

Այս բոլորը աննկատ չանցան մեր թշնամիներու մայրաքաղաքներուն մէջ՝ Պաքու եւ Անգարա։

Աննկատ չանցաւ նաեւ ընդդիմու–թեան մօտ, որ զգալով երկրին գլխուն գալիք վերահաս վտանգը, փորձեց ժո–ղովրդային դժգոհութեան ալիքը ղեկա–վարել ու Հոկտեմբերի 8ին համար յայ–տարարեց համապետական հանրահաւաք, համարելով որ վաղուց եկած է այն ժա–մանակը, երբ պէտք էր տուն ղրկել այս իշխանութիւնները։ Եւ շատ արդարացիօ–

րէն՝ մանաւանդ վերի պատկերին լոյսին տակ։

Այս բոլորը աննկատ մնացին միայն անոնց մօտ, Սփիւռքի թէ Հայաս–տանի կարգ մը շրջանակներ, որոնք մա–կերեսային կերպով կը շարունակէին պնդել՝ «Թողէք թող աշխատեն» (ներ–կայիս աղէտը նաեւ այդպիսիներուն վի–զին է)։

Բայց Սեպտեմբեր 27ը աւելի շուտ հասաւ, քան Հոկտեմբերի 8ը։

Հետեւաբար, նիկողենք «ճիշդ» էին երբ կը պնդէին, թէ «պատերազմը ան–խուսափելի էր», ինքնարդարացումի մանկապատանեկան ոճով։ Վերոնշեալ բոլոր ապիկարութիւնները երբ դիտենք մեծ պատկերի մը մէջ, բանականաբա՛ր անխուսափելի պիտի ըլլար պատերազմը։ Ի վերջոյ ապուշներ էէին Անգարայի ու Պաքուի մէջ նստողները։ Անոնք ճի՛շդ վերլուծեցին ու յանգեցան այն եզրակա–ցութեան, որ Հայաստանը տկարացուած է թէ՛ ներքնապէս՝ բոլոր բնագաւառնե–րէն ներս եւ թէ՛ արտաքին յարաբերու–թեանց իմաստով։

Ու եղաւ այն ինչ որ եղաւ։

Հիմա յստակացուցինք, թէ այս իշ–խանութեան նկատմամբ Դաշնակցու–թեան ընդդիմութիւնը ի՞նչ հիմքեր ու–նէր։ Բայց կայ այլ հանգամանք մը եւս՝ մեր պարագային։

Ի՞նչ է այդ հանգամանքը

Կուսակցութիւնը (որեւէ կուսակ–ցութիւն) քաղաքական–գաղափարական նոյն տեսլականները բաժնող մարդոց խումբն է, որուն նպատակն է տուեալ երկրի ղեկին տիրանալ, որպէսզի զայն ղեկավարէ ըստ իր սկզբունքներուն, գաղափարաբանութեան ու ճշգած քա–ղաքական թիրախ–նպատակներուն։ Սա նորութիւն չէ․ սահմանումն է կուսակ–ցութիւն բառին։

Դաշնակցութեան պարագային, շատ աւելի բարդ է «կուսակցութիւն» հասկացութեան սահմանումը։ Որովհե–տեւ երկիր ու պետութիւն ղեկավարելու համար, նախ պէտք է ստեղծե՛լ զայն։ Հետեւաբար, Դաշնակցութեան պատմու–թեան առաջին 3 տասնամեակներու պայքարը եղաւ յանուն այդ երկիր–պե–տութեան ստեղծումին՝ տրուած ըլլալով, որ մեր հայրենիքը կիսուած էր Օսման–եան եւ Զարական կայսրութիւններուն միջեւ։

1919էն ի վեր, Դաշնակցութեան քաղաքական անփոփոխ նպատակն է ստեղծել Հայաստան մը, որ ըլլայ ան–կախ, ազատ ու մանաւանդ՝ միացեալ։ Այս նպատակը հիմնաւորուած է մեր Ծրագիրով, ուր խտացուած են մեր գա–ղափարաբանութիւնը, աշխարհահայ–եացքն ու քաղաքական նպատակները։

Հետեւաբար, բնական պիտի ըլլայ ակնկալելը, որ Դաշնակցութիւնը կը մի–տի տիրանալու Հայաստանի ղեկին, որ–պէսզի կարենայ իրագործել իր գաղափա–րական–ընկերվարական սկզբունքները եւ քաղաքական նպատակները։ Այս մէ–կը իրագործելու համար, Դաշնակցու–թիւնը դիմած է զանազան մարտավարա–կան քայլերու, երբեմն գործակցելով, եր–բեմն ընդդիմանալով օրուան տուեալ իշխանութիւններուն՝ անկախ անկէ, որ երկու պարագաներուն ալ դին վճարած է։ Գին վճարած է, երբեմն ալ շատ սուղ, բայց չէ դիջած իր սկզբունքներէն։ Օրի–նակի համար, Արցախի ազատագրական պայքարի պարագային, Դաշնակցու–թիւնը զայն կը գետեղէր Միացեալ Հա–յաստանի կերտումի ռազմավարական նպատակին մէջ․ տարբեր խօսքով՝ մեզի համար Արցախի ազատագրումը քայլ մըն է այդ Միացեալ Հայաստանը ստեղ–ծելու ճամբուն վրայ, բան մը, որ կը բխի մեր Ծրագիրէն։ Նաեւ ասո՛վ կը բա–ցատրուի Լ․ Տ․ Պետրոսեանի կողմէ մեր դէմ չը չկայագործուած հալածանքը 1992էն սկսեալ։

Եկանք հասանք մեր օրերը

Ի տես փաշինեանական քանդիչ ու

աղէտաբեր սանձարձակութիւններուն, ի՞նչ դիրք կը կարծէք որ պէտք է բռնէր Դաշնակցութիւնը։ Բնականաբա՛ր պիտի ընդդիմանար ու դիրք ճշդէր, չէ՞։ Այս կեցուածքը դրսեւորուեցաւ 2019ի Մա–յիսի հանրահաւաքին, երբ զգուշացման «դեղին քարտ» ցոյց տրուեցաւ իշխա–նութիւններուն։

Պատերազմը ու անոր ռազմաքա–ղաքական ղեկավարումը աղէտի յանդե–ցուցին։ Արդիւնքները ծանօթ են բոլո–րիս՝ մարդկային ծանր ու անփոխարինելի կորուստ, Արցախի 75 տոկոսի կորուստ, հազարաւոր տեղահանուածներ, չհաշ–ուած նիւթական ու բնական աղբււրներ եւ այլ կորուստները (մշակելի հողեր, ջուր, ուժանիւթ եւայլն)։ Սակայն գոր–ծընթացը, որ յանգեցուց այս աղէտին, կը պարունակէ հսկայական քանակութեամբ «ինչու»ներու եւ «ինչպէ՞ս եղաւ»ներու հսկայական կոյտ մը, որոնք առաջին հերթին կ’առնչուին ՔՊական իշխանու–թեան երկուքուկէսամեայ ապիկար կա–ռավարումին՝ ինչպէս նշեցինք մեր յօդ–ուածին առաջին պարբերութիւններով։

Մեր երկիրը մասնատումի, մեր պե–տութիւնը քայքայումի, մեր հայրենիքը մայրամուտի ընթացքի մէջ է։ Եւ Դաշ–նակցութեան կեցուածքը տարբեր բան չի՛ կրնար ըլլալ․– Պէտք է կասեցնել այս անկումը, մայրամուտը, քայքայումը։

Ու այս քայքայման ընթացքը կա–սեցնելու համար, ամէն բանէ առաջ պէտք է տուն ղրկել գործող իշխանու–թիւնները, որոնք ուղղակի պատասխա–նատու են այս աղէտին համար։ Տուն ղրկել զանոնք, այլ ոչ թէ «գործակցու–թեան» կեղծ ծեփծեքումներ դրսեւորել՝ արագացնելով երկրին կործանումն իսկ, մեղսակից դառնալով այդ գործընթա–ցին։

Ազգը կործանումի առաջնորդած իշխանութիւններուն հետ կարելի չէ՛ գործակցիլ։ Ազգը կործանումէ փրկելու համար անհրաժեշտ է զանոնք հեռացնել։ Այլ օրակարգ չունինք այսօր։ Այս է օր–ուան հրամայականը Դաշնակցութեան համար, յանուն մեր երկրի փրկութեան, յանուն մեր ժողովուրդի ու ազգի գոյա–տեւումին։ Այս ընելու համար, պէտք է գործակցիլ բոլոր այն ազգային ուժերուն հետ, որոնք կը կիսեն մեր այս կեցուածքը ու պատրաստ են գործակցելու՝ այս նպատակը իրականացնելու համար։ Այս–քան յստակ։

Իսկ մեր տեսակէտները հանրային կերպով բազմիցս բանաձեւուած են Դաշնակցութեան պատասխանատու մարմիններու (Բիւրօ, Գերագոյն Մար–մին, Կեդր․ կոմիտէներ), ու անոնց ներ–կայացուցիչներուն կողմէ, թէ՛ նախա–պատերազմեան եւ թէ՛ յետպատերազմ–եան ժամանակաշրջանին՝ ըլլան ատոնք յայտարարութիւններ, հարցազրոյցներ, հանրահաւաքներու ընթացքին, կամ խորհրդարանէն ներս ելոյթներ։ Ոչ միայն իւրաքանչիւր դաշնակցականի, այլ նաեւ հայրենիքի փրկութեամբ մտա–հոգ իւրաքանչիւր հայու համար, ուղ–ղութիւն են ոչ միայն այս ելոյթները, այլեւ «Հայաստան» դաշինքի ղեկավար կազմին ցուցաբերած կեցուածքները եւ կատարած յայտարարութիւնները Աժէն ներս թէ անկէ դուրս։

Միացեալ Հայաստան ստեղծելու մեր նպատակը իրագործելու համար, ներկայ հանգրուանին նախ պէտք է ձերբազատուիլ այն բոլոր խոչընդոտնե–րէն, որոնք կ’արգելակեն մեր ժողովուրդի այս բնական ձգտումը․ բայց ամէն բանէ առաջ՝ անոր կենսունակութեան, գոյու–թեանական (existential), եւ վերապրելու, ողջ մնալու (survival) բնական իրաւուն–քը։ Ու ինչպէս տեսանք ու ամէն օր ականատես կը դառնանք, ներկայ իշխա–նութիւնները խոչընդոտ են մեր ժողո–վուրդի վերոնշեալ այս իրաւունքներուն։ Մնացածը հեթաթմբն են։

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ



Uniformes

MODERNA

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ

● Փորձառու դերձակուիի

1. Լրիւ ժամանակացոյցով՝ մշտական պաշտօն

2. Կարենալ կատարել տարբեր տեսակի փոփոխումներ (alteration)

3. Կարենալ կարդալ պատուէրները անգլերէն կամ ֆրանսերէն լեզուով

● Պահեստի աշխատակից

1. Լրիւ ժամանակացոյցով՝ մշտական պաշտօն

2. Առաջադրանքներ՝ ապրանքներ ծալել եւ տեղադրել, առաքումները պատրաստել եւ երբեմն ալ առաքումները տեղ հասցնել

3. Կարենալ համակարգիչ օգտագործել, վարորդական իրաւունք ունենալ եւ տիրապետել անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներուն

● Վաճառքի գործավար

1. Լրիւ ժամանակացոյցով՝ մշտական պաշտօն

2. Յաճախորդներու սպասարկում մանրածախ միջավայրի մէջ

3. Կարենալ համակարգիչ օգտագործել, իսկ ֆրանսերէն լեզուի իմացութիւնը կենսական է

● Գրասենեակային յաճախորդներու սպասարկում եւ ձեւայղածքի (graphic design) աշխատակից

1. Լրիւ ժամանակացոյցով՝ մշտական պաշտօն

2. Համակարգչային Excel, Word, Outlook ծրագիրներու, ինչպէս նաեւ ձեւայղածքի (graphics software, Photoshop) իմացութիւն։ Տիրապետել անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներուն

Թեկնածուները կրնան կապուիլ Մարալ Գաթարոյեանին կամ Արա Իմամէճեանին հետ՝ (514) 279-2016

6 ՀՈՐԻԶՈՆ, 30 ՕԳՈՍՏՈՍ-6 ՍԵՊՏԵՄԵՐ 2021

Armenian Legal Centre for Justice & Human Rights announces legal action before the European Court for POWs murdered by Azerbaijan

WASHINGTON, DC — The Armenian Legal Centre for Justice & Human Rights (ALC) in partnership with the International & Comparative Law Centre (ICLaw) has announced the filing of new applications (cases) with the European Court of Human Rights (ECHR) alleging that Azerbaijan is responsible for the deaths of Armenian Prisoners of War (POWs) and civilians held in captivity. The applications present that 19 Armenian individuals, both civilians who remained in their native settlements and soldiers, were killed in 10 separate incidents while these individuals were held captive by Azerbaijani forces and/or in prison. These applications have been presented with irrefutable evidence in the form of eyewitness testimony, widespread video footage posted on the internet, forensic medical examinations and expert opinions. With insurmountable evidence, ICLaw, with the support of ALC, seeks to hold Azerbaijan accountable for failing to protect the lives of those in captivity under both the European Convention on Human Rights and International Humanitarian Law.

“By failing to protect the lives of those in captivity and by failing to investigate captives who are killed, Azerbaijan defiantly violates human rights law and fails to fulfill its obligations under the European Convention on Human Rights,” stated ALC chairperson Kenneth Hachikian. “It is incumbent on the ECHR, and all affiliated European institutions, to unequivocally draw a red line and force Azerbaijan’s dictatorship to take responsibility.”

ALC is committed to pursu-

ing justice for these 19 Armenian individuals and ensuring that all Armenian POWs are released and repatriated without harm. Based on this objective, ALC has partnered with ICLaw based in Yerevan, Armenia, to file cases and advocate before the ECHR on behalf of over 100 individual Armenian POWs. Thus this partnership serves to individually represent more than half of the Armenian POWs currently held in captivity by Azerbaijan. Recently, ICLaw, with the support of ALC, filed additional cases for interim measures and is working constantly to investigate and identify additional POWs held by Azerbaijan. As more information is obtained, ICLaw and ALC will continue to pursue both the freedom and the right to life of all Armenian POWs.

As the greater Armenian nation continues to pursue the release and repatriation of all Armenian POWs, ALC would like to share the names and backgrounds of the individuals on whose behalf ICLaw has filed right to life cases. Readers are advised that the following information may be graphic.

Vahram Lalayan was a 47-year-old civilian who lived in the village of Mets Tagher in the Hadrut region of Artsakh. When the war started, he refused to flee and remained in his home. The corpse of Vahram Lalayan was later found during search operations. The photos of the body and the autopsy protocol indicate that Vahram’s body was not found in its integrity, rather his head was separated from the body, and the

Continued on page E2

Armenia’s Elina Danielian wins European Women Chess Championship

IASI — Armenian GM Elina Danielyan has won the 21st European Individual Women Chess Championship.

Danielian beat Mai Narva of Estonia in the last round. The Championship was held in Iasi, Romania.

(ArmRadio)

Syrian Armenian brothers build first ropeway in Kessab

KESSAB — Syrian Armenian brothers Vahan and Gevorg Peturyan have built the first ropeway in Kessab, a mostly Armenian-populated town in northwestern Syria, Arevelk.am reports.

Plans for the ropeway had been under way since 2010, but the project was postponed due to the war. When Turkish terrorist groups invaded Kessab, the preparatory work was destroyed and valuable materials were stolen.

“Now is the time to gath-

er strength and complete the work. This difficult situation, which has profoundly affected tourism in Kessab, is temporary,” Peturyan said.

He voiced hope that the life in the town would return to normal in the near future.

The ongoing economic blockade in Syria strongly affects Kessab. The return to normal life is hindered by frequent interruptions of water and electricity supply, lack of fuel and other obstacles.

Two servicemen killed in border attacks

YEREVAN—Various firefights along the increasingly militarized Armenia-Azerbaijan border have led to the deaths of two Armenian soldiers last week.

On the morning of August 16, the Ministry of Defence (MoD) of Armenia reported that 46-year-old senior non-commissioned officer Vahan Dimiki Tatosyan had been fatally wounded in what Armenian officials described as another provocation by the Azerbaijani Armed Forces in the direction of the Yeraskh community along the border near Nakhichevan. One Armenian soldier had been killed and one civilian wounded previously near Yeraskh in intermittent shootings that erupted on July 14.

That evening, 19-year-old private Arman Hovannesi Hakobyan also died of a gunshot wound when the Azerbaijani military fired weapons of various calibers at Armenian positions in the Gegharkunik province. The MoD reported three casualties on the Azerbaijani side as a result of the intense skirmish that ensued from the attack.

Armenian Ombudsman Arman Tatoyan shared that Azerbaijan specifically opened fire on the villages of Kut and Norabak, forcing residents to hide in shelters. “They are...creating a real threat to the life and health of the civilians and causing damage to property and livestock...illegally attempting to deprive people of their liberty,” wrote Tatoyan, underscoring Azerbaijan’s violation of international norms.

In the afternoon hours of August 17, Armenia’s MoD reported more shooting in the province of Gegharkunik, this time in the region of Sotk. One Armenian serviceman was injured. Armenian military officials say there was one casualty and one injury on the Azerbaijani side.

Earlier, the MoD also wrote that Azerbaijani units attempted to advance their positions into the Sev Lake region of the Syunik province. The forces were repelled. Azerbaijan suffered one casualty, the MoD reports.

The MoD of Azerbaijan shared two updates on August 16. It reported that Armenian forces fired upon Azerbaijani positions in the Sadarak region of Nakhichevan in the morning and in Kelbajar, one of the seven provinces outlying Artsakh that came under Azerbaijani control at the end of the 44-day war, in the evening. It did not report any casualties.

The Armenia-Azerbaijan border has been volatile since Azerbaijani forces invaded Syunik and Gegharkunik on May 12. On August 12 the Russian government, which so far has

been loath to recognize the Azerbaijani troop movement as an invasion, recorded the first ceasefire violation last week since the signature of the trilateral end-of-war agreement on November 9. The MoD of Russia confirmed a report published by the Artsakh Defence Army that on August 11 Azerbaijan armed forces carried out strikes using combat drones on Armenian positions in Artsakh.

Russian peacekeeping forces were also informed this week of a fire that broke out near Artsakh’s southwestern border. Artsakh’s Ministry of Defence reports that three hectares were burned by Azeri forces on August 17. When firefighters arrived on the scene, military officials said Azeri forces opened fire on them. No casualties were reported.

The MoD of Azerbaijan, for its part, has accused the Artsakh Defence Army of deploying Armenian soldiers near the Mukhtarkend (Mkhitarashen) and Shushakend (Shosh) communities in Askeran, a province that remains under Armenian jurisdiction where Russian peacekeepers have been deployed since November, in violation of the ceasefire agreement. “Weapons and servicemen cannot be sent from Armenia to the territories controlled by Russian peacekeeping forces,” President Ilham Aliyev asserted during an August 14 interview with the CNN Turk TV channel. “This contradicts the November trilateral statement.”

“The November 9 statement envisages the withdrawal of Armenian troops only from the adjacent territories of Nagorno-Karabagh (Artsakh), which are clearly identified in the statement,” the Armenian Foreign Ministry wrote in response.

Back in Yerevan, mounting concerns regarding restrictions on freedom of speech and press have been addressed to the National Assembly in light of heightened regulations of journalistic activity in the parliamentary chamber.

Earlier this month, Lilit Galstyan, a photojournalist for Panorama.am, was informed that she had been banned from entering the National Assembly after photographing State Protection Service (SPS) officers the previous day. She was accused of violating new protocols prohibiting journalists from recording, videotaping or photographing SPS personnel. On August 3, one day after the new parliament

Continued on page E2

NSW Premier Gladys Berejiklian repeats call for Federal Australian recognition of 1915 Genocides

SYDNEY — Premier Gladys Berejiklian, who leads Australia’s largest state of New South Wales, repeated her calls for Australia to join the growing number of nations worldwide that have recognised the Ottoman massacres against Armenians, Assyrians and Greeks as genocides, while she reflected on her own history as a grandchild of Armenian Genocide survivors, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).

Premier Berejiklian was speaking at the virtual commemoration of Assyrian Martyrs and Genocide Day, where the program broadcast by the Assyrian National Council — Australia and the Assyrian National Federation paid special focus to the important role recognition plays in ending the cycle of genocides.

“Please know that so many of us will not rest until the genocide committed against the Assyrians, Armenians and Greeks during that time is acknowledged,” Premier Berejiklian said. “And I again call upon my Federal colleagues and the Federal parliament to acknowledge

what state parliaments across Australia and across various parts of the world have done.”

The Assyrian-Australian community were joined by the Armenian-Australian and Greek-Australian partners of the Joint Justice Initiative, which has over 40 Federal parliamentarians supporting Australia’s accurate recognition of the 1915 genocides suffered by their ancestors.

Premier Berejiklian was joined by fellow prominent political guests of honour, including Hon. Chris Bowen MP (Federal Member for McMahon), Dr. Hugh McDermott MP (State Member for Prospect), Ms. Tanya Davies MP (State Member for Mulgoa), as well as several local government officials, religious leaders and ethnic community organisations.

In a keynote address titled ‘When Does Genocide End?: The Assyrian Case’, participants of the virtual event heard from Armenia-born descendant of genocide survivors, Dr. Anahit Khosroeva Ph.D and guest Dr. Panayiotis Diamadis, who delivered a presentation on the topic “The Genocide of the Assyrian

Սոյն հատորը կը ներկայացնէ Արեւմտահայաստանի եւ Պարսկահայաստանի 72 հայկական բնակավայրերու տեղագրութիւնը, այլբեհական կարգով՝ սկսելով Ադամակերտէն հասնելու համար Օլթի, իւրաքանչիւրին յատկացնելով մէկէն (ինչպէս Փերիին) մինչեւ տասը էջ (Անիին)։ Այնտեղ տրուած են հայկական բնակավայրերու գլխաւոր պատմական իրադարձութիւններու ժամանակագրութիւնն ու ընկերային, մշակութային եւ տնտեսական պայմանները։

Բերեմ միայն երկու օրինակ՝ ցոյց տալու համար, թէ ինչպէ՛ս կը սկսի յօդուած մը (Ադամակերտի պարագային) ու ինչպէ՛ս կ'աւարտի (Օլթիի պարագա–

յին)։.

Ահա առաջինը. «Կը կոչուի նաեւ Հադամակերտ։ Թուրքերը գայն կ'անուանեն Բաշ–կալէ (Բաշկալա), իսկ սեպագիր արձանագրութիւններու մէջ կը յիշատակուի damma ձեւով։ Անուան ստուգաբանութիւնը՝ եբրայերէն «ադամ», հայերէն «կերտ»։ Կը յիշատակուի իբրեւ աւան, գիւղաքաղաք եւ քաղաք»։

Ահա երկրորդը. «Արեւմտեան Հայաստանի նոյն մեծութիւնը ունեցող տասնեակ քաղաքներու (եւ նոյնիսկ հարիւրաւոր մեծ գիւղերու) հետ բաղդատելով, աննախանձելի էր Օլթիի մշակութային կեանքը։ Անիկա փաստօրէն կը սահմանափակուէր հայկական տարրական դպրոցով մը, որ 19–րդ դարու երկրորդ կէսին եւ 20–րդ դարու սկիզբները ունեցած է 40–50 տղայ աշակերտ, եւ քանի մը վարժապետական (Տէր–Թոգիկեան) վարժարաններով, որոնք գրաճանաչութիւն կը սորվեցնէին մանուկներուն»։

Հատորը հարստացած է արխիւային լուսանկարներու փոքր հաւաքածոյով մը՝ առնուած Պոսթընի ՀՅԴ արխիւէն։ Այդ լուսանկարներէն մէկն ալ գետեղուած է շապիկի առաջին էջին, ներկայացնելով Աղթամարի Սուրբ Խնձ եկեղեցին, Ի. դարու սկիզբը՝ կից գործող որբանոցի սաներով, իրենց ուսուցիչներուն եւ հոգեւորականներուն հետ։

Մի քանի մէջբերում ալ ընեմ «Համառօտ տեսութիւն»–էն, որ 17 էջ–նոց ներածական մըն է բնակավայրերու առանձին յօդուածներէն առաջ՝ գաղափար մը ունենալու համար Թադեոս Յակոբեանի հարցերու մօտեցումին, իր ընդգրկուեն հայեցակերպին ու մանաւանդ այն շունչին ու ոգիին, որով ինք առաջնորդուած է։

Այսպէս կը սկսի այդ բաժինը. «Դժուար է ըսել, թէ հայ ժողովուրդի բնօրրանին՝ Հայկական լեռնաշխարհին մէջ, Ե՛րբ ծնունդ առած են առաջին քաղաքները։ Յամենայն դէպս յստակ է, որ տակաւին 3–րդ — 2–րդ հազարամեակներուն (Ք.ա.) այստեղ ձեւաւորուած ցեղային միութիւններու տարածքին մէջ՝ Միտանիի, Հայասա–Ազգլիի ու Նախրեան երկիրներուն եւ անոնց յաջորդած միւս ցեղային–պետական միաւորումներուն մէջ արդէն գոյութիւն ունէին տասնեակ բերդեր ու բերդաքաղաքներ, որոնք ցրուած էին երկրի տարբեր կողմերը եւ հիմնականին մէջ ունէին ռազմական ու վարչական կարեւորութիւն»։

Քիչ անդին կը կարդանք հետեւեալը. «Հայաստանի մէջ քաղաքային կեանքը աննախընթաց վերելք կ'ապրի քաղաքական անկախութեան շրջանին՝ 9–11–րդ դարերուն։ Կ'աշխուժանան հին քաղաքները՝ Դուինը, Վանը, Նախճաւանը, Բաղէշը (Պիթլիս), Հերը (Խոյ), Բագարանը եւ այլն, կը ձեւաւորուին նոր քաղաքներ՝ Անի, Կարս, Արծն, Խլաթ, Մուշ, Լոռի, Կապան, Երազդաւորս։ Քաղաքային կեանքի մեծապէս զարգացումը կը բացատրուի ոչ միայն քաղաքական անկախութեամբ, Արեւելքի ու Արեւմուտքի երկիրներու նկատմամբ Բագրատունեաց թագաւորութեան տարանջրի դիրքով, այլ նաեւ մնայուն խաղաղութեամբ։ 9–11–րդ դարերուն Հիւսիսային եւ Կեդրոնական Հայաստանը զերծ էր արաբական–բիւզանդական երկարատեւ ու արիւնահեղ պատերազմներից, կը գտնուէր անոնց ոլորտէն դուրս եւ անոր արտադրողական ուժերը կը զարգանային միջնադարու համար անսովոր թափով»։

Աւելի անդին. «12–րդ դարու երկրորդ կէսէն մինչեւ 13–րդ դարու 30–40–ական թուականները, Վրաստանի օգնութեամբ, Զաքարեան հայ իշխաններու անմիջական գլխաւորութեամբ, Հիւսիսարեւելեան հայաստանը կ'ազա–



տագրուի սելճուք–թուրքերու լուծէն եւ կրկին կը բռնէ զարգացման ուղին։ Հայաստանի այդ մեծ հատուածի քաղաքներէն կարեւոր էին Անին, Դուինը, Կարսը։ [...] Մոնկոլական արշաւանքներուն ընթացքին անբուժելի հարուած ստացան Հայաստանի նախորդ շրջանին արհեստագործութեան եւ առեւտուրի կեդրոններ դարձած քաղաքները։ [...] 13–րդ դարու 50–ական թուականներէն, երբ հիմնականին մէջ կ'աւարտէին մոնկոլական արշաւանքները, Հայաստանի տնտեսական կեանքը եւ անոր հետ անոր աւերուած քաղաքները կը սկսէին մասնակիօրէն վերականգնիլ։

Գալով աւելի մեզի մօտ ժամանակներուն, ահա թէ ի՛նչ կը գրէ հեղինակը. «1828 թուականին պարսկական լուծէն ազատագրուելու եւ Ռուսիոյ միանալու շնորհիւ, Արեւելեան Հայաստանին մէջ համեմատաբար նպաստաւոր պայմաններ ստեղծուեցան տնտեսութեան զարգացման համար։ Ստեղծուեցան խաղաղ պայմաններ, հաստատուեցան կարգ ու կանոն, օրէնք, եւ ժողովուրդը կրնար առանց ահ ու սարսափի զբաղիլ իր տնտեսութեամբ։ Նախորդ շրջանին նման, երկրի տնտեսական կեանքին մէջ առաջին դիրքի վրայ էր գիւղատնտեսութիւնը, իսկ երկրորդ դիրքի [վրայ]՝ արհեստագործութիւնը։ Հայաստանի մէջ այդ շրջանին արհեստներուն թիւը կը հասնէր մօտ 120–ի։ [...] Արեւելեան Հայաստանի մէջ արհեստները աշխուժացման շրջան կ'ապրէին 19–րդ դարու 50–60–ական թուականներուն, սակայն 70–ական թուականներէն, ռուսական գործարանային արտադրութեան ազդեցութեան տակ, անոնք աստիճանաբար կը քայքայուին եւ անկում կ'ապրին։ 90–ական թուականներէն Արեւմտեան Հայաստանի մէջ եւս արհեստները կը քայ–

քայուէին։ Սակայն այստեղ այդ գործընթացը տեղի կ'ունենար ոչ թէ մեքենայական արդիւնաբերութեան ճնշման (Թուրքիան յետամնաց երկիր էր), այլ սուլթաններու հայաջինջ քաղաքակա–նութեան իբրեւ հետեւանք. Արեւմտեան Հայաստանի բազմահազար արհեստաւորներ 1895–96 եւ 1915–16 թուականներուն զոհ գացին թրքական եաթաղանին, իսկ ձեւով մը ողջ մնացածները բռնեցին գաղթի ճամբան»։

Ահա նաեւ վերջին պարբերութիւնը. «Բաւարար է ըսել, որ Երեւանի նահանգին մէջ կային միայն 5 ոչ մեծ քաղաքներ (Երեւան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Օրտուպատ, Նոր Պայազիտ)։ Նոյնքան քաղաքներ ունէր նաեւ Կարսի մարզը (Կարս, Սարիղամիշ, Կաղզուան, Արտահան, Օլթի)։ Մեծ թիւ չէին կազմեր նաեւ Անդրկովկասի միւս նահանգներու՝ Երզրավետպոլի ու Թիֆլիսի նահանգներու հայկական կամ հայաշատ քաղաքները (Շուշի, Գորիս, Ախալքալաք, Ախալցխա)։ Իսկ Արեւմտեան Հայաստանի քանի մը տասնեակ քաղաքներէն (որոնց մեծ մասը կարելի է նկատել գիւղաքաղաք) շատ թէ քիչ նշանաւոր էին էրզրումը, Երզնկան, Կամախը, Սեբաստիան, Մալաթիան, Խարբերդը, Մուշը, Խլաթը, Պիթլիսը, Շատախը, Վանը, Պայազիտը եւ այլն։ Այս վերջինները, ինչպէս նշուեցաւ, ամբողջ Արեւմտեան Հայաստանի հետ միասին հայաթափ եղան։ Թրքական եաթաղանին 1915–1916 թթ. զոհ գացած մէկուկէս միլիոն հայերուն զգալի մասը կը հանդիսանար քաղաքային բնակչութիւնը։ Մեծաթիւ զոհեր տուաւ նաեւ բռնի տեղահանուած հայութիւնը, տեղահանուած 600 հազար հայերէն իրենց կեանքը փրկած եւ ռուսական զօրքերուն օգնութեամբ Արեւելեան Հայաստան ու Կովկաս գաղթած են միայն 350 հազարը»։

Ինչո՞ւ արտագրեցի այս բոլորը, որոնց մասին աշխատասիրութիւններով Յակոբեան ապրած է իր ամբողջ կեանքը։ Ընթերցողը չի կրնար չտեսնել այն կարմիր գիծը, որ անցած է մեր պատմութեան տարեգրութեան առաջին էջերէն մինչեւ այսօր։ Այդ՝ կերտելու, կերտածը աւերակի վերածուած տեսնելու եւ դարձեալ կերտելու մեր ժողովուրդի անվճատ վճռակամութիւնն է, թէկուզ կամայ թէ ակամայ երկիրը լքելու եւ օտարութեան ալ յանձնուելու երեւոյթներու ալ առկայութեամբ։

Շնորհակալութիւն «Հորիզոն»–ին այս կենսական գիրքը վերստին հրապարակ հանելուն համար։ Սակայն առաջին հերթի երախտագիտութիւն հեղինակին՝ գայն գրած ըլլալուն համար։

ՎԻԷԺ–ԱՐՄԷՆ

Voyages

HAIG

Travel

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Լոռ Զապոէ՝**

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

www.horizonweekly.ca

ՀՈՐԻԶՈՆ, 30 ՕԳՈՍՏՈՍ-6 ՍԵՄԵՏԵՐԻ 2021 7

«Քորոնա» Ժահրի ԴԷմ Պատուաստ Եւ Զգուշացման Կոչ

Երկար եւ մանրամասն յօդուած մը գրած էի 8 փետրուար 2021–ին՝ «Քորո–նա» ժահրի համաճարակի մասին, որ լոյս տեսաւ սփիւռքի հայկական շատ մը թերթերուն մէջ։ Այդ յօդուածին մէջ անդրադարձած էի՝ «Քորոնա» ժահրի համաճարակի սկզբնաղբւրին, անոր տարածման, փոխանցման, տարողու–թեան, պատճառած հիւանդութիւննե–րուն, կանխազգուշական միջոցներուն, համաշխարհային տնտեսութեան հաս–ցուցած վնասներուն, ընկերային եւ կրթական համակարգի խախտումներուն եւ նորաձեւութիւններուն, ինչպէս նաեւ անոր դէմ տեսակաւոր պատուաստներու պատրաստութեան մանրամասնութիւն–ներուն ու անոնց յատկութիւններուն։ Այս բոլորին մասին ամէն օր տակաւին կը գրուի եւ ժողովուրդը տեղեակ կը պահուի այս համաճարակի նոր զարգա–ցումներուն մասին։

Այս գրութեամբ պիտի անդրա–դառնամ «Քորոնա» ժահրի համաճարա–կին դէմ պայքարելու պատուաստումի անհրաժեշտութեան եւ հարկադրանքին։ Զգուշացման կոչ մըն է բոլոր մեր հայ–րենակիցներուն, կոչ մը՝ նուազագոյն վնասով դուրս գալու այս անկաշկանդ, քանդիչ, մահացու եւ մանաւանդ անտե–սանելի թշնամիէն՝ «Քորոնա» ժահրի համաճարակէն, COVID 19–էն։

Ուրեմն, պատուաստ մը կը գրգռէ անհատին վարակամերժութեան (immunity) համակարգը, կը զարգացնէ յատուկ վարականերժութիւն եւ կը յայտ–նաբերէ հակամարմիններ անհատին մէջ։

Պատուաստը արգելք կը հանդի–սանայ որոշ բորբոքումային հիւանդու–թիւններու եւ կամ կը մեղմացնէ գա–նոնք։ Ան ամէնէն ազդու միջոցն է ար–գելք հանդիսանալու շատ մը բորբոքու–մային հիւանդութիւններու։ Անոր միջո–ցով Համաշխարհային առողջապահական կազմակերպութիւնը (ՀԱԿ) կարողացած է վերջնականապէս անհետացնել, արմա–տախիլ ընել (eradication) ծաղկախտը (small pox) եւ հսկողութեան տակ առած է կարգ մը հիւանդութիւններ՝ շատ մը երկիրներու մէջ, ինչպէս՝ մանկական անդամալուծութիւնը (polio), հարսանի–թը եւ պրկախտը։ ՀԱԿ–ի համաձայն, գոյութիւն ունին 25 հիւանդութիւննե–րու դէմ յատուկ պատուաստներ։

Պատուաստները ընդհանրապէս կը տրուին մարդոց վարակումէն առաջ։ Սակայն կարգ մը պատուաստներ կը նե–րարկուին նաեւ վարակումէն ետք, օրի–նակ՝ կատղախտի (rabies) պատուաստը։

Պատուաստումը բժշկական ապա–հով դարմանամիջոց մըն է։ Անոր բար–դութիւններուն յաճախականութիւնը որեւէ մէկ դեղի բարգութիւններէն աւելի էին։

Կան շարք մը հիւանդութիւններ, որոնց դէմ պատուաստումը պարտադիր է շատ մը երկիրներու մէջ։ Այս հիւան–դութիւններն են՝ լեարդաբորբ B–ին (hepatitis B), կեղծմաշկը (diphteria), պրկախտը (tetanus), կապոյտ հազը

(pertusis–whooping cough), կրիփը (influenza), ունկնագեղձատապ–ունկ–նանկը (mumps), մանկական անդա–մալուծութիւնը (polio, poliomyelitis), պրկախտը (tetanus), ջրծաղիկը (chicken pox), հարսանիթը (measles) եւ ծաղկախտը (small pox)։

Պատուաստուելով՝ կը պաշտպա–նենք ոչ միայն մենք զմեզ, այլ՝ մեր շուրջ գտնուողները։

Էտուլարտ ձենըր կը նկատուի նախահայրը առաջին պատուաստի պատրաստութեան։ Ան 1798–ին Անգլ–իոյ մէջ պատրաստած է ծաղկախտի պատուաստը։ Մինչ այդ ծաղկախտը միխոնաւոր մարդոց կեանքը խլած է։ Էտուլարտ ձենըր–ի պատրաստած պատուաստով այս հիւանդութենէն մահացողներուն թիւը զգալիօրէն նուազած է։

Բժշկական պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Էտուլարտ ձենըրի կատարած այս առողջապահա–կան յեղաշրջումէն ետք Ամերիկայի նախագահները եւ բարձրաստիճան գիտնութրականները, հետեւելով անոր կատարած աննախընթաց իրագործու–մին, որդեգրած են ծաղկախտի դէմ պարտադիր պատուաստում։

1885–ին Լուի Փասթէօր կը գտնէ կատղախտի պատուաստը, որ կը կա–տարէ փրկարար գործ՝ վարակուածնե–րուն մեծամասնութիւնը կը փրկուին ստոյգ մահէ։

Յաջորդաբար կը գտնուին գա–նազան հիւանդութիւններու, յատկա–պէս մանկական հիւանդութիւններու պատուաստները։

Կապոյտ հագի պատուաստի գործածութեամբ, մահերը նուազած են 84 տոկոսով, հարսանիթի պարագային, 99 տոկոսով, գերմանական հարսանիթի եւ ունկնանկի պարագային՝ 99 տոկո–սով, պրկախտ (tetanus) պարագային՝ 96 տոկոսով։

Մանկական անդամալուծու–թիւնը, կեղծմաշկը եւ ծաղկախտը հա–մայն աշխարհի մէջ այսօր գրեթէ վերջնականապէս ոչնչացած են շնորհիւ անոնց պատուաստի գործածութեան։

Այսօր համայն աշխարհը դի–մագրաւած է «Քորոնա» ժահրի համա–ճարկը, որ կայծակնային արագու–թեամբ ծնաւ, տարածուեցաւ եւ եղաւ մղձաւանջ ամբողջ մարդկութեան հա–մար։ Այս համաճարակը կը նմանի ծո–վային զօրաւոր ալիքաւոր հոսանքի մը, որ կարելի չէ կասեցնել սովորական մի–ջոցներով։ Անոր տարածումը կարելի էր կասեցնել միայն ու միայն արտակարգ ազդու պատուաստի մը միջոցով, որ գոյութիւն չունէր։ Անշուշտ շատ կա–րեւոր էին հետեւեալ կանխազգուշա–ցումները՝ դիմակի գործածութիւնը, երկու մեթր հեռաւորութիւն պահելը, յաճախակի ձեռք լուալը, չհագալը եւ չփռնդտալը։

Պատուաստին պատրաստութիւնը կը կարօտէր ամիսներու եւ նոյնիսկ

տարիներու գիտական բժշկական անխոնջ եւ յարատեւ աշխատանքի։ Եւ այդպէս եղաւ։ Աշխարհի չորս ծագերէն աշխար–հահռչակ մասնագէտ գիտնականներ եւ բժիշկներ գործի լծուեցան, աշխատեցան գիշեր ու ցորեկ՝ օգտագործելով պատուա–տի պատրաստութեան արհեստագիտու–թեան նորագոյն ոլորտները։ Անոնք ի վեր–ջոյ հասան նպատակայարմար արդիւնքի։ Անոնք հնարեցին «Քորոնա» ժահրի հա–մաճարակին դէմ պատուաստը։ Զանազան երկիրներու մէջ պատրաստուեցան տեսա–կաւոր պատուաստներ, որոնք մարմինի դիմադրողական համակարգին կը սորվեց–նեն ապահովապէս ճանչնալու եւ արգելա–փակելու COVID 19–ը պատճառող ժահրը։

Այս պատուաստներու պատրաստու–թիւնը եղած է ակադեմական խիստ հսկո–ղութեամբ եւ հիմնուելով գիտութեան վրայ, որ գոյութին ունի տասնամեակներէ ի վեր։ Անոնք փորձարարական չեն։ Այս պատուաստները բոլորն ալ ապահով են եւ մասնաւոր բարդութիւններ չեն ստեղծեր։ Անոնք ազդու են, արգելք կ’ըլլան վարա–կումին եւ ժահրի տարածման։ Անոնք ար–գելք կը հանդիսանան վարակումէն ետք ծանր հիւանդութիւններու եւ բարդու–թիւններու յայտնաբերման։ Անոնք չեն վնասեր կաթնտու մալբերուն եւ արգելք չեն ըլլար յղութեան։ Իսկ յղի կիներ իրենց բժիշկին հսկողութեամբ եւ արտօնութեամբ կրնան պատուաստուիլ։ Գերզգայնութիւն ունեցող անձեր եւ վարակուած անձեր կրնան ստանալ այս պատուաստը։

Մինչեւ օրս շատեր պատուաստուե–ցան՝ հետեւելով առողջապահական կազ–մակերպութիւններու եւ հաստատութիւն–ներու հետեւողական թելադրութիւններուն եւ ցուցմունքներուն։ Սակայն կը սպաս–ուի, որ պատուաստումը շարունակուի, եւ աշխարհի բնակչութեան մեծ տոկոսը ստա–նայ այս պատուաստը, մանաւանդ՝ երի–տասարդները, պատանիները եւ բոլոր անոնք, որոնք չեն պատուաստուած եւ կամ կը տատամսին պատուաստուելու։

Այս ժահրը ոչ միայն սանձարձակ կը տարածուի 360 աստիճանի վրայ, հորիզո–նական եւ ուղղահայեաց, այլ ան ազատօ–րէն կ’այլափոխուի, եւ իր տարբերակը կը յայտնուի, որ աւելի ազդեցիկ է, արագօրէն կը փոխադրուի տեղէ տեղ եւ կը փո–խանցուի անձէ անձ ու մանաւանդ աւելի վտանգաւոր է եւ մահացու։

Արգէն ահագանգը հնչած է ամէն կողմէ։ Նոր տարբերակը հասած է բոլոր ժողովուրդներուն անխտիր։ Միակ միջոցը պաշտպանուելու համար այս տարբերակէն՝ պատուաստուիլն է։ Անոնք, որոնք չեն պատուաստուած մինչեւ օրս, անյապաղ դիմելու են պատուաստումի կեդրոնները՝ ստանալու համար պատուաստը։

Պատուաստուելով ոչ միայն մենք մեզ կը պաշտպանենք յարձակող ժահրէն, այլ նաեւ կը նպաստենք, որ մեր շուրջին–ներն ալ պաշտպանուին։ Ուստի պատ–ուաստումը անյապաղ կատարուելու է։ Ուշացումով ժահրը աւելի ազատ եւ արագ կը տարածուի, եւ նոր տարբերակները կը մխրճուին ամէն կողմ։

Շրջապատուած ենք անհիմն, սխալ, ոչ գիտական տեղեկութիւններով եւ մո–լորեցնող խառնիխուռն ցուցմունքնե–րով։ Դժբախտաբար ականատես ենք մեծ պետութիւններու քաղաքական դեկա–վարներու պատուաստումի հակաքարող–չութեան, որոնք կը ծառայեն իրենց քա–ղաքական խաղերուն եւ շահերուն։

Երկու հակասական պատգամներ կ’ողողեն պարզ ժողովուրդին ուղեղները։ Առաջինը՝ քաղաքական դեկավարներուն եւ երկրորդը՝ գիտնականներուն եւ բժիշկներուն հրապարակային կոչերը։ Գիտնականներ եւ բժիշկներ հիմնուելով իրենց ակադեմական կարողութիւննե–րուն, երկար տարիներու գիտական փոր–ձառութիւններուն եւ հետազօտական աշխատանքի արդիւնքներուն վրայ՝ կը կատարեն յայտարարութիւններ, նա–խազգուշական յայտարարութիւններ եւ ցուցմունքներ՝ ի շահ մարդկութեան եւ մարդ արարածի առողջութեան, հանգիս–տին եւ բարօր կեանքին։ Իսկ քաղաքա–կան դեկավարներ կը մոլորեցնեն իրենց հետեւորդները կեղծիքով լեցուն յայտա–րարութիւններով, աղաղակելով՝ կը մեղ–մացնեն կացութեան ահաւորութիւնը, արգելափակումները՝ վերադարձնելու համար իրենց տնտեսութիւնը եւ անձ–նական քաղաքական շահերը։ Անոնք կ’անտեսեն գիտնականներուն կատարած գիտահետազօտական աշխատանքներու արդիւնքները, կը պահեն զանոնք լու–սանցքի վրայ եւ նոյնիսկ արգելք կը հանդիսանան անոնց յորդորներուն եւ կոչերուն։

Մարդոց առողջութիւնը կ’ապա–հովուի գիտութեամբ եւ ոչ թէ՛ քաղա–քական կեցուածքներով ու քաղաքական դեկավարներու աճալարարութեամբ։ Հա–մաճարակները դիմագրաւելու եւ անոնցմէ դուրս գալու իրաւասութիւնը կը պատկանի գիտնականներուն, բժիշկ–ներուն եւ առողջապահական մարմիննե–րուն եւ ոչ թէ՛ իշխող քաղաքագէտնե–րուն, որովհետեւ գիտութիւնը հիմնուած է արդիւնքներու, տուեալներու եւ ճշմարտութիւններու վրայ։

Այս խառնաշփոթ կացութիւնը կը մատնէ պարզ ժողովուրդը անվստահու–թեան, անորոշութեան, վախի եւ մտահո–գութեան։ Երեւոյթ մը, որ արդարացի է։ Սակայն կողմնորոշուելու ենք՝ վստահ–լով գիտութեան ապահով տեղեկութիւն–ներուն եւ տուեալներուն։

Պատուաստումը խիստ հրամայա–կան է՝ չվարակուելու, մենք զմեզ եւ մեր շրջապատը պաշտպանելու եւ արգելք հանդիսանալու ժահրի նոր տարբերակ–ներու տարածման։ Պատուաստումը կը նպաստէ՝ բնականոն կեանքի վերսկսման եւ տնտեսութեան վերազարթնումին, կրթական հաստատութիւններու վերա–բացման, ազատ ճամբորդութեան, ընկե–րային եւ մշակութային ձեռնարկներու վերսկսման, վերջ դնելու պարտադիր մե–կուսացումին ու տնակեցութեան եւ այլն, եւ այլն։

ԲԺԻԾԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

horiZon		
H O R I Z O N Hebdomadaire arménien Armenian Weekly Publié par / Published by Les Publications Arméniennes (1991) 3401, Olivar-Asselin Montréal, Québec Canada H4J 1L5	Abonnement annuel / Yearly subscription Canada 2 ^e classe - 2 nd class: \$80 plus applicable taxes 1 ^{re} classe - 1 st class: \$95 États-Unis / USA 1 ^{re} classe - 1 st class: \$95 US Ailleurs / Elsewhere 1 ^{re} classe - 1 st class: \$125 US	Administration / Publicité Sylva Ehramdjian-Bachekjian (General Manager) Tél.: (514) 332-3757 Télécopieur/Fax (514) 332-4870 E-Mail: sylvla@horizonweekly.ca Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X
Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝	Գրիգոր Հոթոյեան, (416) 494-1921 Ժազ Վարպետեան, (416) 722-9225	
Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրսէնթաշ		

Financé par le gouvernement du Canada	
Funded by the Government of Canada	
Canada	

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՈՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԼԵՒՈՆ ԵԱՂՃԵԱՆՆԻ մահուան
Անի Եաղճեան, ընտք. 1000
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Դպրաց Դաս 260
Անահիտ Վանկեան 300
Նոյեմի Եաղճեան 200
Տ եւ Տ Յարութիւն Եաղճեան, ընտք. 1000
Տ եւ Տ Հայկ Վանկեան, զվկբ. 150
Պետրոս, Սօսի Տէօքմէճեան, ընտք. 200
Լիզա Գարամանուկեան 50
Ներսէս, Ծովիկ Գարամանուկեան, ընտք. 50
Լիզա Գարամանուկեան 50
Տ եւ Տ Թորոս Գարամանուկեան 100
Միրնա Գարամանուկեան 50
Շաքէ Յակոբեան 50
Մանուկ Էյմոբեան 100
Սիբվարդ Շայն 50
Անի Շայն 50
Տ եւ Տ Զարեհ Պապիկեան 50
Մարալ Գասարճեան 30
Րիթա Շապոյեան 30
Րոնի, Սօսի Արզումանեան 100
Տ եւ Տ Րաֆֆի Աբանեան 50
Ժիրայր, Հուրի Զաքարեան 100
ՀՈՄ–ի Ծաղկոցի անձնակազմ 100
«Արամ եւ Պերճուհի Մարգարեան» մանկամսուրի անձնակազմ 100
Լիզա Մազումեան 50
Եւա Հայրապետեան 100
Յարութ, Զեփիււ Ասատուրեան 50
Տ եւ Տ Վիզէն Յովսէփեան 100
Տ եւ Տ Վահագն Յովսէփեան 50
Վրէժ–Արմէն, Նազիկ Արթինեան 50
Լեւոն, Ֆիլոր Պէնկեան 40
ՅովՀաննէս, Սեղա Գաթարոյեան 100
Ժան, Յասմիկ ձիկունեան 50
Տանի, Լոռի Զաքարեան 50
Ճորճ, Տիան Զատոյեան 200
Կարպիս, Անահիտ Գաբրիէլեան 50
Թորոս, Սիլվա Հարպոյեան 100
Յակոբ, Զեփիււ Մէրշէեան 50
Ուաչիկ, Սիլվա Գորբուզեան 50
Տ եւ Տ Յակոբ Ազալլա 100
Յարութ, Դայար Ուզալեան 50
Giancarlo, Rita Spagnoletti 50
Յասմիկ Ուաչատուրեան 50
Տ եւ Տ Յակոբ Ամիրեան 50
Գէորդ, Դայար Գալլօլեան 50
Մարտիրոս, Մարիա Եփրեմեան, ընտք. 60
Մարտիրոս, Մարիա Եփրեմեան, ընտք. 100
Տ եւ Տ Գէորդ ՕՀանեան 50
Տ եւ Տ Ժիրայր Շատարեան 100
Տանլըլտ, Հուրիժ Տէմիրճեան Տէնիք 50
ՅովՀաննէս, Շամիրամ Մուրատեան 50
Յասմիկ Նաճարեան 100
Բժ. եւ Տիկ. Ժան Աւաքբեան 50
Վիզէն Թիւֆէնկճեան 100
Րաֆֆի Տօնապետեան, Սեղա Պասմաճեան 100
Էմմա Բոսիքեան 50
Տէօլիէթեան ընտք. 100
Րաֆֆի, Ալին Մսոցեան 100
Տ եւ Տ Գէորդ Քէօսէեան 100
Տ եւ Տ Նորայր Պէզճեան 50
Աւետիս, Ալիս ձէպէճեան ամ. 50
Տ եւ Տ Թովմաս Թովմասեան ամ. 100
Տ եւ Տ Զարեհ Պոյաճեան 100
Սիւզան Սուլպեան 50
Գրիգոր Տէր Ղազարեան 50
Բժ. եւ Տիկ. ՕՀան Թապաքեան 100
Բժ. եւ Տիկ. Վաղարշ ԷՀրամճեան 100
Տ եւ Տ Րաֆֆի Տօնիկեան 25
Տ եւ Տ Վիզէն Սարգիսեան 100
Րիթա ՕՀանեան 100
Տ եւ Տ Յովիկ Պիլէմճեան 30
Տ եւ Տ Րաֆֆի Գէլէշեան 20
Արեգ, Քրիսթին Մարգարեան 200
Արա, Վարդ Պարթէքեան 50
Տ եւ Տ Սարօ Տէր Պետրոսեան 200
Սեւակ, Նայիրի Ղազարեան 50
Գէորդ Գաղէզեան 60
Պետրոս, Մարի Րօզ Ալահայոտյեան 100
Տ եւ Տ Յակոբ Մանճիկեան 50
Մարօ Կոստանեան 50
Մարգիս, Ովաննա Գոյումճեան 250
Լեւոն, Լենա Տէմիրճեան 40
Րաֆֆի, Հուրի Անտոնեան 100
Տ եւ Տ Ոորէն Տիմիթեան 60
Վահէ, Մարլէն Թաշճեան 50
Երան Պանքեան 30
Յակոբ, Մարալ Նազարեան 50
Տ եւ Տ Տօքթ. Մանուէլ Քէօսէեան 50
Տ եւ Տ Արթօ Մարգարեան 200
Տ եւ Տ Յակոբ Թորոսեան 40
Սիմօն, Սիլվա Տէմիրճեան 30
Տ եւ Տ Պօղոս Պոյաճեան 20
Նիզակ Տէր Յովակիմեան, Թազուհի Էմէրզեան 200
Վահէ, Մանուշակ Յակոբեան 100

Յակոբ, Լուսին Մարի 20
Տ եւ Տ Յարէթ Թիթիճեան 100
Տ եւ Տ Արամ Պետրոսեան 50
Տ եւ Տ Էմիլ Վարդիվառեան 50
Տ եւ Տ Սեւակ Չոգաքլեան 50
Սազօ, Անի Ոըշխըշեան, ընտք. 50
Րիթա Գազանճեան 50
Գալին Սողիկեան 100
Զուրիկեան ընտք. 50
Գրիգոր, Անի Գոյումճեան 100
Վիզէն Աֆարեան 50
Աստղիկ Աֆարեան 50
Տ եւ Տ Պետրոս Զէրքէզեան 50
Վարդան, Նայիրի Բարախեան 100
Տ եւ Տ Նազօ Ուաչիկեան 100
Լուորու, ՄՀեր Պէրպէբեան, զվկբ.40
Տ եւ Տ Սեւան Իսթանպուլեան 200
Տ եւ Տ Ատոճ Մալխասեան 100
Անահիտ Պարտաքճեան 30
Տ եւ Տ Զաւէն Ինճէճիկեան 50
Dr. et Mme Abed Kahwati 100
Անտրէ, Նաթալի Պէշլեան 40
Տ եւ Տ Զաւէն Տէր Սահակեան 40
Տիգրան Պետրոսեան 40
Զարեհ Ջէյթունեան 50
Սեղա Պետրոսեան 100
Տ եւ Տ Ճորճ Զապունեան 50
Լորի Ապարքեան 50
Մարտիկ, Աննա Ունանեան 200
Ղազարոս Գալայճեան 30
Նուշիկ Էլոյեան 100
Մետրոպ. Սիլվա Պէրէճիկեան 100
Ռուբէն, Սուզըն Աշգարեան 50
Արա, Անի ՕՀանեան 50
Տ եւ Տ Կարի Մինասեան 20
Յարութ, Րիթա Սայէղ 100
Արմէն, Քրիսթին Ալէմեան 50
Կարապետ, Սիլվա Քէօշքէբեան 50
Տ եւ Տ Վազգէն Միսճեան 50
Շուշան Բարունակեան 20
Տ եւ Տ Կարօ Տոնոյեան 100
Ժան, Արտեմիս Մկրտիչեան 50
Բժ. եւ Տիկ. Կարպիս Հարպոյեան 50
Շողիկ Նաճարեան 20
Հայկ Պասմաճեան, ընտք. 100
Սիւզի Գիւրտօղլանեան 50
Սալբի Մարգարեան 100
Միքթր եւ Տիկ. Հրանդ Նահապետեան 100
Տ եւ Տ Վրէժ Հատիտեան 50
Մայք, Սոնիա Գուգումեան 100
Տ եւ Տ Զաւէն Չոգաքլեան 40
Տ եւ Տ Գէորդ Միլրզայեան 50
Յակոբ, Աննա Պուկարեան 100
Բրշ. Կարօ Սրկ., Հերա Նոխուտեան 50
Բժ. եւ Գուկտ. Արի Մկրտիչեան 50
ՎԻՔԹՈՐԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՊԱՐԹԵԻԱՆԻ մահուան
Պետրոս, Մարթա Պետրոսեան 50
Ծաղիկ Ներսէսեան, զվկ.՝ Րաֆֆի 50
Վազգէն, Աթինա, Ալեքս, Ֆիլիփ Պետրոսեան 50
Վիզէն, Մարիան, Էմա Պետրոսեան 50
Րիթա Պարթեւեան, Լորի Կիւրկիւրեան 100
Յակոբ, Րիթա Պարթեւեան, զվկբ. 100
Յարութ, Ալին Մահսէրէճեան, զվկբ. 100
Տօքթ. Սահակ, Հուրի Մահսէրէճեան, զվկբ. 200
Տ եւ Տ Պերճ Պարթեւեան, զվկբ. 100
Շաքէ Քիւրտօղլանեան 50
Արուշ, Անի Տէմիրճեան, զվկբ. 100
Արմէն Անթալի 50
Ռուբէն, Սուզըն Աշգարեան 25
Սիբվարդ Ճամպազեան 40
Յարութ, Թալին Քիւրտօղլանեան 50
Պասէմ, Վարդենի Իպրահիմ 100
Elias Meny, Nayla Jebara 50
Մի ոմն 50
ԳԷՈՐԳ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ մահուան
Մոնթրէպլի Հայ Կեդրոնի Տարեցներու Միութիւն 150
Շաքէ Յակոբեան 50
Լուիզ Նչանեան 60
Գաբրիէլ, Մարօ Քէօսէեան 50
Թալիսա Տէմիրճեան 100
Սարգիս, Սօսի Մանուկեան 20
Գրիգոր Տէր Ղազարեան 50
Տ եւ Տ Զօհրապ Մալէք 1000
Ռուբէն, Սուզըն Աշգարեան 50
Տ եւ Տ Պետրոս Տէմիրճեան 40
Տ եւ Տ Յակոբ Տէմիրճեան, զվկբ., Ժանէթ Տէմիրճեան 500
Տօքթ. եւ Տիկ. Հրայր Տէր Գէորդեան, 200
Օտրի Անկալաթեան, զվկ.՝ Սերժ 200
Տ եւ Տ Սեղրակ Փարիզեան 300
Տ եւ Տ Հրաշ Մանուկեան 50
Պերճ Մեկիբեան 20
Պարոյր, Սիլվա Արթինեան 50
Տ եւ Տ Աւետիս Մարկոբեան 20
ՄԷՐԻ ՍԻԼՎԱՆԵԱՆ ՎԱՐԳԱՆԵԱՆԻ մահուան
Kabbas family 400
Մոնթրէպլի Հայ Կեդրոնի Տարեցներու Միութիւն 150
Պերճ Մեկիբեան 50

Էտուար, Ֆրանսիս Էմեան 100
Գաբրիէլ, Մարօ Քէօսէեան 50
Շաքէ Յակոբեան 50
Տ եւ Տ Կարապետ Իսքէնտէբեան 50
Սեղրակ Քիւրքճեան 40
Հայկուհի Վարդանեան 100
ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ Մի ոմն 250
Սեղա Գալանճեան 200
ՄԵԼԻՆԷ ԳՈՃԱՊԱՇԵԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ 40–ին
Հերմինէ Մանուկեան 100
ՌՈՅԱԲԷՆ ՊՈՅԱՃԵԱՆԻ մահուան (Արժանթին) 40–ին
Արշօ Պոյաճեան 300
Ճորճ, Էյիզապէթ Լակոնիս100
ԱԼԻՍ ՊԻՆԼՊԻԼԵԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ 40–ին
Կիլտա Սուլաքեան, զվկբ.՝ Վիգէն, Ալին 200
Ճիմի Մուրատեան, Նաթալի Պաշլար 200
Մարտիկ, Սիւզի Նուպարեան, զվկբ.՝ Լորա, Զաքարի 200
Վարդգէն Մուրատեան 100
Ժորժ, Անի Մուրատեան, զվկբ. 100
Տօքթ., Տիկ ժողէֆ Սանոսեան 100
Թալին Մուրատեան, ընտք. 50
Հերմինէ Մանուկեան 100
Անահիտ Պարտաքճեան 20
Րաֆֆի, Պայծիկ Աւազեան 50
ՆԱՅԻՐԻ ՇԱՀՊԱՋԵԱՆԻ 8–րդ տարեկիցին,
ՆՈՒՊԱՐ ՇԱՀՊԱՋԵԱՆԻ Հոգւոյն
Քրիսթիան, Թալին Օրֆալի, ընտք. 150
ԱԼԻԵԱՆ ԳԱՆՁԱՆԱԿԵԱՆԻ 2–րդ տարեկիցին,
ՄԿՐՏԻՉ ԳՈՐՈՒՇԵԱՆԻ Ա. տարեկիցին
Գանճանակեան ընտք., Անահիտ Գանճանակեան 50
ԵՐՈՒԱՆԴ ՎՓՐԻԿԵԱՆԻ 14–րդ տարեկիցին
Անահիտ Ափրիկեան, Տօքթ. եւ Տիկ. Արմէն, Փաուլա Ափրիկեան, զվկբ.՝ Սարօ, Ալեքս, Կարէն, Սոնիա Ափրիկեան 400
ԱԼԳԼԻՆ ԹԱՆԱՇԵԱՆԻ 40–ին,
ՆԵՐՍԵՍ ԹԱՆԱՇԵԱՆԻ 10–րդ, ԱՆԱՀԻՏ ԹԱՆԱՇԵԱՆԻ 6–րդ տարեկիցներուն
Սեպուհ, Ատելինա Տանակէօզեան 20
Յովիկ ԹԱՆԱՇԻՐԵԱՆ 20
ՀԵԼԷՆ ԱՍՏՈՒՐԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ 5–րդ տարեկիցին,
ԱԽԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ, ՅԱԿՈԲ, ՄԱՐԻ ԱՄԷՆՃԵԱՆներու Հոգւոյն
Հմայեակ, Շաքէ Ամէնճեան 50
ԺԵՐԱՐ ԳԱՆԹԱՐՃԵԱՆԻ մահուան
Ժան Նամրուտ 20
Երեմ Մաքսապօ 50
ԺԱԳ ՅԱԿՈԲ ԽԱՆՃԵԱՆԻ մահուան
Ուաչիսաշեան ընտք. 40
Ժան Բրուտեան ընտք. 100
Հրաշ Մուրատեան 100
Syndicat des Coproprietaires du 4655 Henri Bourassa 50
«ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ»ի խնդրանօք
Մի ոմն 20
ԼԵՒՈՆ ԵԱՂՃԵԱՆԻ 40–ին
Անի Եաղճեան, ընտք. 500
Նոյեմի Եաղճեան 100
Յարութիւն, Մակտա Եաղճեան, ընտք. 100
Անահիտ Վանկեան 300
Նայիրի Մանուկ 75
Բրշ. Կարօ Սրկ., Հերա Նոխուտեան 25
Տ եւ Տ Վիզէն Յովսէփեան 50
Աստղիկ Էսմէրեան 20
Բրշ. Մուրատ Սրկ. Սանոսեան 20
Տ եւ Տ Սարգիս Նոխուտեան 20
Սարգիս, Անի Ոշխշեան, զվկբ. 30
Լուսին, Սասուն Մալոյեան 30
Ռիթա, Թամար Գազանճեան 50
Գրիգոր Տէր Ղազարեան 25
Փիէռ, Ծովիկ Թէրզեան 50
Սիւզան Սուլպեան 25
Յակոբ, Տիրուի Մանճիկեան 50
Տ եւ Տ Նազօ Ուաչիկեան 30
Տ եւ Տ Վրէժ Ասէմեան 40
Տ եւ Տ Մարգր Պէրէճիկեան 50
Տ եւ Տ Թորոս Գարամանուկեան 30
Յարութ, Զեփիււ Ասատուրեան 30
Ռուբէն, Շուշան Աշգարեան 50
ՎԱՀԷ ԽԱՋԱՏՈՒՐԵԱՆԻ 40–ին
Սալբի Ուաչերեան, զվկբ.՝ ձէսիքա, Կրէկ 100
Տ եւ Տ Նազօ Ուաչիկեան 30
Տ եւ Տ Սարգիս Նոխուտեան 20
Տ եւ Տ Յարութ Թաթարեան 10
ԱՐՍԷՆ ԳԱԼԼՕՂԼԵԱՆԻ 8–րդ տարեկիցին
Այտա Գալլոյեան 50
Հրաշ, Նաթալի Գալլօղլեան 50
Պերճ, Նաթալի Գալլօղլեան 50
Անահիտ Տէրտէրեան 20
ՏԵՐ ԱՐՍԷՆ ՔՀՆՅ. ԳԱԹԱՐՈՑԵԱՆԻ,
ՏԻՐԱՄԱՅՐ ՈՎՍԱՆՆԱ ԳԱԹԱՐՈՑԵԱՆԻ Հոգւոյն

Նուարդ Թաշճեան 20
Յովիկ, Սեղա Գաթարոյեան 40
ՄԵԼԻՔ ՍԻՄՈՆԵԱՆԻ Ա. տարեկիցին,
ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻՄՈՆԵԱՆԻ, ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ Հոգւոյն
Մարի Ուրֆալեան Սիմօնեան, զվկ.՝ Յակոբ 40
Յակոբ, Ժանէթ Սիմօնեան, զվկբ. 20
Գրիգոր, Լուսին Պուտաքեան, զվկբ. 20
Անի Սիմօնեան 20
Ուաչիկ, Սիւզան Սիմօնեան 40
Ճորճ, Զեփիււ Ներսէսեան 20
Ռուպէր, Քրիսթին Տարազճեան, զվկբ. 15
ՄԻՐՈՒՆ ԱԼԼԱՀՎԷՐՏԵԱՆԻ Հոգւոյն
Հանրի, Սիւզան Ալլահուրեան 40
ՌԱԶՄԻԿ ՄԱԼՈՑԵԱՆԻ 13–րդ տարեկիցին
Փիէռ, Ծովիկ Թէրզեան 50
ԱՐՇԱԼՈՅՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ 40–ին
Ռուպէր, Քրիսթին Տարազճեան, զվկբ. 15
ԿԱՐԱՊԵՏ, ԾԻԱԾԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆներու Հոգւոյն
Մուրատեան զվկբ. 50
ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ
Հրայր, Լիլիան Պէնկեան 200
ԹՈՒՆԻԿՈՎ ԲԱՆՏԱՒՈՐՈՒԵԼՈՒ ԱՌԹԻԻ
Մի ոմն 100
ԲԱՐԻ ԼՈՒՐԻ ՄԸ ԱՌԹԻԻ
Մի ոմն 25
Մի ոմն 25
ՈՒՆՏԻ ՄԸ ԱՌԹԻԻ
Հայկուհի Արուշեան 50
«ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ»ի խնդրանօք
Գայիանէ Պոտրումեան 50
ԳԷՈՐԳ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ 40–ին
Լարա Տէմիրճեան, Ալեքսանտր Տէմիրճեան 100
Ժանէթ Տէմիրճեան 50
Յակոբ, Նանի Տէմիրճեան, դուստր՝ Թանիսա 50
Վարուժ, Արփիւնէ Արթինեան, զվկբ. 50
Տ եւ Տ Ալեքսանտր Աւետիս ամ. 100
Իմաստուհի Օտապաշեան ամ. 100
Գրիգոր Տէր Ղազարեան 25
Տ եւ Տ Պետրոս Տէմիրճեան 40
Մարօ Կոստանեան 25
ՄԷՐԻ ՍԻԼՎԱՆԵԱՆ ՎԱՐԳԱՆԵԱՆԻ 40–ին
Գարեգին Վարդանեան, Ռիշլըրտ Վարդանեան, Մոնիքա Վալաքէզ 40
Գարեգին, Նորա Կիւրիւսեան 30
Պերճ Մեկիբեան 30
Արալանեան ընտք. 50
Գապապս ընտք. 200
Մարօ Կոստանեան 25
Կարօ, Մարօ Իսքէնտէբեան 20
Հայկուհի Վարդանեան 100
Ռաֆֆի, Անիթա Մասիէճեան, զվկբ. 100
ՅԱԿՈԲ ԶՈՓՈՒՐԵԱՆԻ 40–ի, ՆԱԶԱՐ ԶՈՓՈՒՐԵԱՆԻ, ԺՈՐժԷՍ ՏԱՊԱՂԵԱՆԻ Հոգւոյն
Անի Սէմէրճեան, զվկբ.՝ Էտի, Մայք, Սարին 100
Տ եւ Տ Հրաշ Չոփուրեան, զվկբ. 50
Տ եւ Տ Րաֆֆի Չոփուրեան, զվկբ. 50
Տ եւ Տ Կարօ Տէրտէրեան, զվկբ. 50
Տ եւ Տ Մատթէոս Ալվազեան 20
Պերճ, Արշալոյս Պուկարեան 40
ՊՕՂՈՍ ԱԶԱՐԵԱՆԻ 9–րդ տարեկիցին
Տ եւ Տ Կարապետ Ազարեան 20
ՆՇԱՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ Ա. տարեկիցին
Ռաֆֆի, Անուշ Պէրէբեան, զվկբ. 40
ՄԵՍՐՈՊ ԱՊՈՅԵԱՆԻ 9–րդ տարեկիցին,
ԱՊՈՅԵԱՆ գերդաստանի ննջեցելւց
Մարիա Ապոյեան, դստերք 60
ՍԵԴՐԱԿ, ԱՆԺԷԼ ԱԹԱՇԵԱՆեաներու,
ՃՈՂԷՑ ՔԷՄԱՆՃԵԱՆԻ Հոգւոյն
Տ եւ Տ Ճորճ Աթաշեան, զվկբ. 30
ՊՕՂՈՍ ԱԶԱՐԵԱՆ, ՎԵՐԺԻՆ ՄԱՐՏԻՌԱՍԵԱՆներու Հոգւոյն
Անի Մարտիրոսեան 50
ՎԱՐԳԱՆՈՒՇ ՎԱՐՎԱՌԵԱՆԻ մահուան
Տ եւ Տ Մանուէլ Պաքըրճեան 100
Տ եւ Տ Եդուարդ Էմմեան 100
Տ եւ Տ Տիգրան ՔէՀեայեան 100
Մարօ Կոստանեան 25
Արման, Լուսի ՊէնօՀանեան 100
Հրայր, Սիբվարդ Տաղաւարեան 50
Լեւոն, Սիլվիա Նաճարեան 100
ՈՒՆՏԻ ՄԸ ԱՌԹԻԻ
Սօսէ Սարալեան 100
Սօսէ Սարալեան 100
ՓՈՐՁԱՆՔԷ ԱԶԱՏԵԼՈՒՆ ԱՌԹԻԻ
Մի ոմն 10
ՏԻԳՐԱՆ ՀԱՃԷԹԵԱՆԻ 13–րդ տարեկիցին,
ԼԵՒՈՆ, ԱՆԺԷԼ ՀԱՃԷԹԵԱՆներու, ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԱԶԱՏՈՒՀԻ ՍՏԵՓԱՆԵԱՆներու,

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԹԱՇՃԵԱՆԻ, ԷՏՆԱ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ, ԿԱՐԱՊԵՏ, ԱԼԱՒԻՆ ԶԷՐՄԱՆԵԱՆներու, ՌՕԶԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ Հոգւոյն
Տիանա Հաճէթեան 300
Սեւան, Նաթալի, Մինա Իսթանպուլեան 100
Յարէթ, Ալին, Գրիգոր, Էմմա Թիւթիւնճեան 100
Վէնդ Թաշճեան 100
Շաւարշ, Քաթրին Իսթանպուլեան 100
ԱՆԹԱՌԱՄ–ՆԻՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ 5–րդ տարեկիցին
Պերճ Մեկիբեան 300
Արամ, Այտա Մեկիբեան 100
Կարպիւ, Անահիտ Գաբրիէլեան 30
Յովիկ, Սեղա Գաթարոյեան 30
Գաբրիէլ, Մարօ Քէօսէեան 50
Տ եւ Տ Լիպարիտ Կամսարական 35
Սոնիա Աշանեան 50
ՄՈՎՍԷՍ ԳԱՐԱՐԻԿԵԱՆԻ Ա. տարեկիցին,
Նաեւ ԳԱՐԱՐԻԿԵԱՆ գերդաստանի ննջեցելոց
Գէորդ Գաբարիկեան 200
Ալիս Գաբարիկեան Եազուպեան 200
ԺԵՐԱՐ ԳԱՆԹԱՐՃԵԱՆԻ 40–ին
Լիտիա Գանթարճեան 50
Շուշիկ Պօղոսեան 20
ՍԻՐԱՆՈՒՇ ՍՈՄՈՒՆՃԵԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ Ա. տարեկիցին,
ԳԷՈՐԳ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, ՅԱԿՈԲ, ՄԱՐԻ ԳԱՆԻԷԼԵԱՆներու Հոգւոյն
Նիկոլ, Սօսի, Մարիա Դանիէլեան 20
ԼԵՒՈՆ, ԱԼԻՍ ՏԷՐ ԱՍԱՏՈՒՐԵԱՆներու,
ԽԱԶԻԿ, ԱՐՇԱԼՈՅՍ ՍԵՐՈՐԵԱՆներու Հոգւոյն,
ՍԵՐՈՐԵԱՆ, ՏԷՐ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ, ՄԻՐԻՃԱՆԵԱՆ, ԳԱԶԱՆՃԵԱՆ գերդաստանաց ննջեցելոց
Վարուժան, Անի Սերոբեան 100
Սեղա Թապաքեան 200
ՅՈԼԻՆԷ ՇԱՄԼԵԱՆ ԱՖԱՐԵԱՆԻ Ա. տարեկիցին
Վիզէն, Արեւիկ Աֆարեան 100
Միքթր Վարդգէս, Իզապէլ Շամլեան 100
Վաչէ, Սօսէ Շամլեան, զվկբ. 50
Աստղիկ Աֆարեան 100
Վերոնիք Միակեան 50
Վաչէ, Պարպարա, Անի Աֆարեան 100
Տ եւ Տ Երուանդ Տէր Սահակեան 50
Տ եւ Բժ. Երուանդ Աֆարեան 20
ԱՐՄԷՆՈՒՀԻ (ԱՐՄԻԿ) ՏԷՄԻՐՃԵԱՆԻ 4–րդ տարեկիցին,
ՏԷՄԻՐՃԵԱՆ գերդաստանի ննջեցելոց
Իաքէլ Տէմիրճեան 50
Ստեփան, Քրիսթինա, Թամար Տէմիրճեան 50
Շուշիկ Տէմիրճեան, զվկբ. 50
Տ եւ Տ Յակոբ Մինասեան 20
ՂԵՒՈՒԴ, ԹԱԳՈՒՀԻ ՊԱՊՈՑԵԱՆներու,
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ԶԱՐՈՒՀԻ ԷՄՄԻԵԱՆներու Հոգւոյն
Վարդան, Անուշ Պապոյեան, զվկբ. 40
Կարապետ, Հրանուշ Արիկեան, զվկբ. 15
ՆԵԿՏԱՐ ՏԻԼԱՆԵԱՆԻ Հոգւոյն
Սոնիկ, Նայիրի ՕՀաննէսեան, զվկբ.՝ Ճաք, Էլինա 100
ԶՈՀՐԱՊ ԵԱՐԱԼԵԱՆԻ 40–ին
Ննաքեան ընտք. 50
ՅԱԿՈԲ, ԱԼԻՍ ՊԱՔՔԱԼԵԱՆներու, ՀԱՅԿԱԶՈՒՆ, ԱՐԹՈՒՆԷ, ՅՈՎՍԷՓ ԷՅԼԷՃԵԱՆներու, ՅԱԿՈԲ ՈՍԿԵ

S.S. Լևոն Իսկենտերեան 20
Տիկ. Ազգանոյշ Հատիտեան 30
S.S. Կէրի Մինասեան 20
S.S. Փանոս եւ Հուրի Ապրազեան 50
S.S. Վրէժ Հատիտեան 25
S.S. Բաֆֆի, Նաթալի Ֆրունճ–եան 50
Տիար Հրայր Գարակէօղեան 50
Տիար Նարեկ Մուրատեան եկեղեցւոյ պայծառութեան 100
Բարեպաշտ մը բարի ապաքին–ման Տէր Ողորմեա կը խնդրէ 25
Բարեպաշտ մը ուրախ լուրի մը առթիւ եկեղեցւոյ պայծառութեան 20
Տիկ. Մարալ Սարաժ–Յակոբեան եկեղեցւոյ պայծառութեան 50
S.S. Ռուպէր Սէմէրճեան եկեղեցւոյ պայծառութեան 20
Յակոբ Շահինեան եկեղեցւոյ պայծառութեան 50
Տիկ. Լուսին Ֆըսաքճեան եկեղեցւոյ պայծառութեան 100
S.S. Սահակ եւ Զուարթ Օտա–պաշեան խոնկ կը նուիրեն Ննջեցեալ՝ ՓԱՆՈՍ ՌէՋեԱՆի մահուան առաջին տարեիւցին առթիւ:
S.S. Տան եւ Անի Մաշուքա եւ զւկնք.
S.S. Սերժ եւ Սեւանա Բահքէճ–եան եւ զւկնք.
S.S. Մեքոպ Ռէզեան
S.S. Համբիկ Ռէզեան
Տիկ. Յասմիկ Արապաղեան
S.S. Փօլ Ռէզեան
S.S. Փօլ եւ Մարալ Պօղոսեան 50
S.S. Վիզէն եւ Թալին Գրիգորեան 50
S.S. Զուէն եւ Սեմալին Զոքարլ–եան 30
S.S. Արամ Մանուկեան 40
S.S. Ալէքս Պօղոսեան 30
S.S. Պօղոս Մանուկեան 40
Ննջեցեալ՝ ԿԻԼԻՍՍԱՆ ՏԵՐ ՅԱ–ԿՈՐԵԱՆի մահուան 40–ին առթիւ, մահացած Լուս Անճէլոս:
S.S. Նազօ եւ Մարալ Վարդան–եան,
Ռիթա, Վահան եւ Նարեկ Վարդանեան,
Մայք Սաղտըճեան 200
S.S. Ատամ եւ Արաքսի Սալիպա 100
S.S. Պօղոս եւ Թալին Պօտիկեան 50
S.S. Գէորգ Եսափունճան 50
S.S. Իլիսա Արուսի 50
Թաշճեան ընտանիք 50
Ննջեցեալ՝ ԷՏՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ–Նի մահուան 15–րդ եւ
ԳԷՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆի մահ–ուան 11–րդ տարեիւցնեըուն առ–թիւ:
Տիկ. Շողեր Մաթոսեան, Տիար Ճորճիկ Շահպաղեան եւ Քէվլըն 50
Տիար Ալպէր, Տօնա եւ Անանիա Եղիկեան 50
Ննջեցեալ՝ ԿԻԼԼԻԻԶԱՐ ԹՕ–ԳԱԹԼԵԱՆի յիշատակին:
Տիկ. Տիգրանուհի Թօփուզեան եւ զւկնք. 30
S.S. Կարապետ եւ Անժէլ Հօ–փուրեան եւ զւկնք. 30
Ննջեցեալ՝ ԱՋՆԻԻ ՀԷՔԻՄԵԱՆի մահուան առաջին տարեիւցին առթիւ:
S.S. Ռուբէն եւ Թալին Պարսում–եան, Տիար Գօգօ Ոչուճեան 20
Ննջեցեալ՝ ԳԷՈՐԳ ՕՀԱՆԵԱՆի յիշատակին:
S.S.Գրիգոր եւ Վանիա Գանձա–նակեան 20
Ննջեցեալ՝ ՎԱՐԳՈՒՀԻ ԱՂԱԱՊ–ԵԱՆ–ԹՈՐՈՍԵԱՆի
մահուան 5–րդ տարեիւցին առ–թիւ:
S.S. Մերուն եւ Մարալ Թաշճեան եւ զւկնք 15
Ննջեցեալ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ եւ ԼՈՒ–ՍԻՆ ԹԵՐԶԵԱՆներու յիշատակին:
Տիար Մկրտիչ Թերզեան 50
S.S. Պերճ Պասթաճեան եւ զւկնք. 40
Ննջեցեալ՝ ՔՐԻՍԹՅՆԷ ԱՂԱԱ–ԵԱՆի մահուան 40–ին առթիւ,
մահացած Յունաստան:
S.S. Կարօ եւ Քրիսթին Ասատուր–եան 50
Ննջեցեալ՝ ԳՐԻԳՈՐ ՏԷՄԻՐՃԵԱ–Նի մահուան 3–րդ տարեիւցին առթիւ,
ինչպէս նաեւ՝ ՊԱՐԷԹ ԹՈՐՈՍԵԱ–Նի եւ ԳԷՈՐԳ ԷՏՈՅԵԱՆի յիշա–տակին:
Տիկ. Ալիս Տէմիրճեան,
S.S. Հէրի եւ Անի Տէմիրճեան,
S.S. Սեւակ եւ Շողեր Տէմիրճեան 50
Ննջեցեալ՝ ՄԿՏԻՑ, ՎԱՐԳՈՒՀԻ եւ ՄԻՔԱՅԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆներու յիշատակին:
S.S. Գրիգոր Գրիգորեան 30
Հանգուցեալ ԳՈՀԱՐ ԵՐԱՄԵԱՆի մահուան առթիւ
փոխան ծաղկեպսակաի կատար–ուած նուիրատուութիւննք:

S.S. Գէորգ եւ Արփինէ Պէրպէր–եան 200
Գրիգորեան ընտանիք 100
Շողիկ Ժամարեան 100
S.S. Սարգիս Պայապանեան 50
Տիկ. Յօրին Ձէրշեան 30
S.S. Շանթ եւ Նուշիկ Երէմեան 20
S.S. Կարպիս եւ Գոհար Քէքլիկ–եան 20
S.S. Սեպուհ Համամճեան 20
Փիէռ Գասպար ընտանիք 20
Միրէյ Քէպապճեան 10
Լիզա Քէպապճեան 10
Հանգուցեալ՝ ՆԱՌԻԱԼ ՄՈՒ–ՖԱՌԻԱՏ–ԵՈՒՆԱՆԵԱՆի մահ–ուան առթիւ
փոխան ծաղկեպսակաի կատար–ուած նուիրատուութիւննք:
Տիկ. Հերմինէ Մանուկեան 50
Տիկ. Անի Սապունճեան եւ զւկնք. 100
S.S. Սերոր եւ Ֆլօրա Կիրակոս–եան 100
S.S. Անդրանիկ Եունանեան 100
Տիկ. Մարի Զաքարեան 20
Տիկ. Անթուանէթ Ուրիշեան 50
S.S. Ալէն եւ Վլքի Քէօսէյեան 100
S.S. Յակոր եւ Լենա Զաքարեան 100
Տիար Վազգէն Կիրակոսեան 20
Josephine Barbar 40
Salma Barbar 20
Aboud Ziade 20
S.S. Սարգիս Արմուտեան 70
S.S. Զարեհ եւ Նաթալի Պոյաճ–եան եւ զւկնք. 40
Ժիզէյ Եունանեան 50
S.S. Ժօզէֆ Եունանեան 50
Elias Essio 50
Ibrahim Essio 50
Jalal Siras 50
S.S. Վազգէն Հապիպ 50
Georgette Barbar 20
Rabih Semaan 30
Dani Aslo 50
George Nehmaji 250
Miraz Souleiby 35
Raffi Neama 40
S.S. Յովիկ Գարայեան 30
Սարգիս Հէլվաճեան ընտանիք 40
Ճորճ Պուլոս 20
Տիկ. Ժօրժէթ Եունանեան 40
S.S. Արա Կիրակոսեան ընտանիք 50
Pierre Hajjar family 50
Marie Jibrou 50
George Hanna 50
Տիկ. Հերմինէ Մանուկեան իր զարմիկին՝
Արամ Պէքէրեանի բարի ապա–քինման Համար
Տէր Ողորմեա կը խնդրէ 20
Բարեպաշտուհի մը Տէր Ողորմեա կը խնդրէ 20
Բարեպաշտուհի մը իր Հարազա–տին Տէր Ողորմեա կը խնդրէ 20
Բարեպաշտուհի մը իր Հարազա–տին՝
փոքրիկն Լիանա Արզումանեանի բարի ապաքինման Համար
Տէր Ողորմեա կը խնդրէ 20
ՅովՀաննէս ՅովՀաննէսեան իր կողակիցին՝
Վարդուհի ՅովՀաննէսեանի բարի ապաքինման Համար
Տէր Ողորմեա կը խնդրէ 50
Լիզպոնի Հինգի Նահատակու–թեան 38–րդ տարեիւցին առթիւ,
ննջեցեալ՝ ՎԱԶԷ ՏԱՂԼԵԱՆի, ՍԻՄՈՆ ԵԱՀ–ՆԷՅԵԱՆի, ԱՐԱ ՔՐԺԼԵԱՆի, ՍԵԴՐԱԿ ԱՃԷՄԵԱՆի եւ
ՍԱՐԳԻՍ ԱՔՐԱՀԱՄԵԱՆի յիշա–տակին:
Ս. Գէորգ Եկեղեցոյ Հոգաբարձու–թիւն
Հ.Յ.Դ. Սարգիս Զէյթլեան Կոմիտէ Հ.Օ.Մ.–ի Շուշի Մասնաճիւղի Վարչութիւն 100
Հ.Մ.Ը.Մ. Լաւալի Մասնաճիւղի Վարչութիւն 100
Ընկ. Մոսիկ Թօփուզեան 30
Ընկ. Արսօ Գաբրիէլեան 50
Ընկ. Յովիկ Թիւֆէնճեան 50
Ընկ. Արսէն Գոնճալեան 20
Ընկ. ՆերսէՀ Լիպարեան 40
Ընկ. Յարութ Ղաջադորճեան 30
Ընկ. Ռաֆֆի Հատիտեան 40
Ընկ. Սեզար Գույումճեան 25
Ընկ. եւ Տիկ. Յակոր եւ Սարի Լա–խոյեան 50
ԸնկՀի Ալիս Դաւիթեան 25
Ննջեցեալ՝ ՎԻՔԹՈՐԻԱ ՇԱՀԻՆ–ԵԱՆի մահուան 40–ին առթիւ:
S.S. Յակոր եւ Թամար Շահինեան եւ զւկնք. 50
Նանոր Շահինեան ընտանիք 60
S.S. Միլօ եւ Զէֆիլու Գասպար–եան 50
S.S. Ժան Շահինեան եւ զւկնք 20
S.S. Համբարձում Շահինեան եւ զւկնք. 20
Երէցեան ընտանիք 50
S.S. Լեւոն եւ Մանուշակ Ճիճեան

ընտանիք 50
Տիկ. Էօժէն Զարշաֆեան 30
Տիկ. Ազատուհի Գասպարեան եւ զւկնք. 50
S.S. Սերոր եւ Անի Ասատուրեան 30
S.S. Վիզէն Շահինեան 50
S.S. Զոհրապ Շահինեան 20
S.S. Յակոր եւ Ալվարդ Ասատուր–եան 20
Տիկ. Վիքթորիա եւ Լուսի Ասա–տուրեան 20
Ննջեցեալ՝ ԶՈՀՐԱՊ ԵՐԱՐԱԼԵԱՆի մահուան 40–ին առթիւ:
Տիկ. Համեստ Եարալեան, S.S. Արամ Եարալեան 50
Ննջեցեալ՝ ՅԱԿՈՐ ՎԱՐԳԻՎԱՌ–ԵԱՆի մահուան 14–րդ տարեիւցին առթիւ,
ՎԱՐԳԻԱՆ, ԻՍԿՈՒՀԻ եւ ԱՔԷԼ ՎԱՐԳԻՎԱՆԵԱՆներու,
ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԻ, ՄԱՐԻԱՄ եւ ԶԱՔԱՐ ԱՐԻԿԵԱՆներու եւ Հա–մայն
ՎԱՐԳԻՎԱՌԵԱՆ, ԱՐԻԿԵԱՆ եւ ՄԱՆՈՒԿԵԱՆ ընտանիքնեըու
Ննջեցեալներու յիշատակին:
Տիկ. Լուսին Վարդիվառեան, Կասիա եւ Վարդան,
S.S. Կարէն եւ Ռօզմէրի Վարդի–վառեան, Գալիա եւ Ճէյմս Յակոր 150
Նուպար Վարդիվառեան ընտա–նիք 25
Ննջեցեալ՝ ԶԱՐՈՒՀԻ ՎԱՆԵԱՆի յիշատակին:
Վանեան եւ Գըլնճեան ընտանիք–ներ 20
Ննջեցեալ ՓԱՄՔԱԼ ՊԱՅՐԱԳ–ՏԱՐԵԱՆի մահուան 7–օրէքին առթիւ:
Տիկ. Ալիս Պայրազտարեան 50
Օրդ. Մարօ Տէմիրճեան 30
Ննջեցեալ՝ ՇՈՒՇԵԱՆԻԿ ԷՀՐԱՄՃ–ԵԱՆ–ՓԼԻԿԵԱՆի մահուան առ–թիւ,
փոխան ծաղկեպսակի:
Տիկ. Մարի Լախոյեան,
S.S. Յակոր եւ Պէլրինտա Լախոյ–եան,
Օրդ. Զէֆիլու Լախոյեան,
S.S. Մարք Օլիվիէ եւ Սօնա Լա–խոյեան 100
Ննջեցեալ՝ ՆՇԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆի մահուան առթիւ, փոխան ծաղ–կեպսակի:
Տիար Յարութիւն ՕՀաննէսեան 200
S.S. Գէորգ եւ Ռօզէթ Գէորգեան իրենց զաւկին՝
Սօֆիա–ի առաջին եկեղեցի այցե–լութեան առթիւ,
Եկեղեցւոյ պայծառութեան 50
Բարեպաշտուհի մը Տէր Ողորմեա կը խնդրէ 20
Բարեպաշտուհի մը փոխան խա–ղողի 25
Գանատայի Հայոց Թեմի Առաջ–նորդ Սըբազան Հօր տնօրինումով եւ
Ս. Գէորգ Եկեղեցւոյ Հոգաբար–ձութեան խնդրանքով,
ՀոգեՀանգստեան արարողութիւն կատարուեցաւ Պէյրութի Նաւա–Հանգիստի պալթՈւմի առաջին տարեիւցին առթիւ զոհուած բոլոր անձերու եւ յատկապէս՝
զոհուած Հայորդիներու յիշատա–կին:
Ննջեցեալ՝ ՆԱՌԻԱԼ ԻՎԷԹ ՄՈՒԻ–ՖԱՌԻԱՏ–ԵՈՒՆԱՆԵԱՆի մահ–ուան 40–ին առթիւ:
Տիար Սերոր Եունանեան,
S.S. Յարութ Եունանեան եւ զւկնք.,
S.S. Ռաֆֆի Եունանեան եւ զւկնք.,
S.S. Հաննա Ասիլ եւ զաւակ 100
S.S. Սերոր եւ Ֆլօրա Կիրակոս–եան եւ զւկնք. 70
Տիկ. Անթուանէթ Ուրիշեան եւ զւկնք. 30
Տիկ. Սօնիա Ուրիշեան եւ զւկնք. 50
S.S. Սազօ Արմուտեան եւ զւկնք. 30
Տիկ. Անի Սապունճեան եւ զւկնք. 40
S.S. Անդրանիկ Եունանեան եւ զւկնք. 40
Տիկ. Մարօ Գօլոբեան 50
S.S. Կիրօ եւ Սիլվա Ազազարեան 30
S.S. Ժագ եւ Ալիտա Եունանեան եւ զւկնք. 60
S.S. Ալէն եւ Վիքի Քէօսէյեան եւ զւկնք. 100
S.S. Տանի եւ Ատիպա Ասլօ 40
Ղեւոնթ Եունանեան ընտանիք 50
Ննջեցեալ՝ ՀՐԱՅՐ ՏՈՒՇԳՈՒՆ–ԵԱՆի մահուան 40–ին առթիւ:
Տիկ. Մատլէն Գույումճեան–Տուշ–քունեան,
S.S. Նարեկ եւ Համիկ Ղազար–եան եւ զաւակ,
S.S. Կարօ եւ Ռուպի Տուշքունեան եւ զւկնք.,
S.S. Արա եւ Ռանա Տուշքունեան 150
S.S. Յակոր եւ Սալբի Լախոյեան,

Կասիա եւ Ռաֆֆի 50
Տիկ. Մարի Զէրշեան 30
Տիկ. Մարօ Ֆարրա 25
S.S. Արա եւ Անի ՕՀանեան 50
Ննջեցեալ՝ ՊԱՅՄԱՌ ՄԱԼՈՅԵԱՆ–Նի մահուան 15–րդ եւ
ՄՈՒՇԷՂ ՄԱԼՈՅԵԱՆի մահուան 8–րդ տարեիւցնեըուն առթիւ:
S.S. Փիէռ եւ Մովիկ Թերզեան եւ զւկնք. 50
Տիկ. Զարուհի Մալոյեան–Լըմէյ 50
Տիկ. Լուսին Մալոյեան եւ Սասուն 30
S.S. Տարօն եւ Զապէլ Մալոյեան 50
S.S. Ռօտի եւ Դալար Ռամիա 25
S.S. Շանթ եւ Նուշիկ Թորոյեան 40
S.S. Պետրոս եւ Մարի Ռօզ Ալա–հայտոյեան 50
Օրդ. Նուշիկ Էլոյեան 100
Տիկ. Ժագլին Մալոյեան 30
S.S. Յովիկ եւ Նանոր Զէյթունալ–եան 20
Տիար Ռուբէն Մալոյեան 40
S.S. Ռաֆֆի Պաշուր եւ զւկնք. 25
Տիար Պետրոս Մալոյեան 25
նջեցեալ՝ ՊՕՂՈՍ եւ ՀԵՐՄԻՆԷ ԶՈՊՈՅԵԱՆներու, ՊԱՅՄԱՌ ԶՈ–ՊՈՅԵԱՆի
եւ Համայն ԶՈՊՈՅԵԱՆ եւ ՅԱ–ԿՈՐԵԱՆ ընտանիքնեըու
ննջեցեալներու յիշատակին:
Տիկ. Թագուհի Մանկեան եւ զւկնք.,
Տիար Վերոնիք Մնակեան եւ զւկնք.,
Տիար Մինաս Զոպոյեան 60
Ննջեցեալ՝ ՎԱՐԳԳԷՍ ԱՔՐԱՀԱՄ–ԵԱՆի մահուան 14–րդ տարեիւցին առթիւ,
մահացած Պաղտատ:
S.S. Միհրան եւ Զէֆիլու Մըրդիք–եան 50
Ննջեցեալ՝ ՄԻՀՐԱՆ եւ ՍԻՐԱՐԹԻ ՎԱՐԳԱՆԵԱՆներու,
ՅԱԿՈՐ, ԱՍՏՏՈՒՐ եւ ԺՕԶԷՖԻՆ ԶԻՐԻՇԵԱՆներու,
ԿԻԼԼԻԻԶԱՐ եւ ՄԱՐԻ ԱՊԱԼԵԱՆ–

ներու եւ ՄԻՇԷԼ ՔԷՇԻՇԵԱՆի յիշատակին:
S.S. Աբրահամ եւ Սօնիա Զիրիշ–եան 50
Հանգուցեալ՝ ՓԱՄՔԱԼ ՊԱՅՐԱԳ–ՏԱՐԵԱՆի մահուան առթիւ
փոխան ծաղկեպսակի:
S.S. Վահէ են Անի Մուրատեան 200
Կիւլոյեան ընտանիք եւ Յարութիւն Սարկաւազ 100
Զէֆիլու Թերճանեան 100
Տիկ. Վարդուհի Թերճանեան 50
Քրշ. Կարօ Սրկ. եւ Հերա Նոխուտ–եան 40
Տիկ. Ռօզա Մազաքեան 25
Օրդ. Սիւզան Բարտաշեան 25
Տիկ. Ժագլին Գալայճեան 20
Տիկ. Սիրան Վէզիրեան 40
Տիկ. Վերա Քէպապճեան 20
S.S. Կարպիս եւ Մարիթա Զաքր–եան 20
Տիկ. Ժանէթ Քէպապճեան 30
S.S. Աբրահամ եւ Սիլվա Էյլէնճ–եան 50
S.S. Զարեհ եւ Սօնա Երամեան ընտանիք 20
Տիկ. Ալիս Տէմիրճեան 50
Օրդ. Մարօ Տէմիրճեան 50
Տիկ. Սիրարփի Նասոյեան 20
Տիկ. Անի Նահարեան 20
Տիկ. Վարդուհի Կիլիւմեան 20
Էլիսա Սարգիս ընտանիք 40
Տիկ. Ռահել Քէլէշեան 25
S.S. Ռիշար Քէշալեան 10
S.S. Սեւակ եւ Քրիսթին Եսայեան 20
S.S. Պետրոս Զոքաքեան 30
Տիկ. Մաքրուհի Ճինպաշեան 30
S.S. Սարգիս եւ Մարի Մոմճեան 20
S.S. Նազօ եւ Մարալ Վարդան–եան ընտանիք 50
Տիկ. Հերմինէ Մանուկեան 50
S.S. Ռուպէր Քէշալեան 50
Տիկ. Շուշիկ Տէմիրճեան 50


ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՒՆ ՏԱ–ՐԵՑՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
Շուշան Փիլիկեանի մահուան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԵ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Զարեանին, Գերաշնորհ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանին, Ազգային Վարչութեան ներկայացուցիչներուն, Արժանապատիւ Տ. Գառնիկ Աւ. քիւյ. Գոյունեանին, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոր Տէր Խաչատուրեանին, ՀՅԴ Բիւրոյի անդամներուն՝ ընկ. Բաֆֆի Տօնապետեանին եւ Կիրօ Մանոյեանին, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Միւր Գարազաշեանին, ՀՅԴ «Միիրան Փափազեան» կոմիտէին, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան, «Սօսէ» եւ «Շուշի» մասնաճիւղերու վարչութեանց, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութեան, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հոգաբարձութեան, Ս. Գեորգ Եկեղեցւոյ հոգաբարձութեան, Մոնթրէալի Հայ կեդրոնի տարեցներու միութեան եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, հեռաձայնով եւ նուիրատուութեամբ ցաւակից եղան մեր սուգին, մեր սիրելի մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին ՇՈՒՇԵԱՆ ԷՀՐԱՄՃԵԱՆ ՓԼԻԿԵԱՆի մահուան տխուր առթիւ։ Սգակիրներ՝ Էհրամճեան եւ Փիլիկեան ընտանիքներ։

ԽՆՂԱԿՑՈՒԹԻՒՆ

«Հորիզոն»ի խմբագրութիւնը կը շնորհաւորէ քարտուղարութեան անդամ Մարինա Տէր Խաչատուրեան Պուրճլեանին եւ իր ամուսնոյն՝ Վազգէն Պուրճլեանին, մանչ թոռնիկով մը բախտաւորուելնուն ուրախ առիթով։





MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /





BARRY KAZANDJIAN KAREN KAZANDJIAN ALEX KAZANDJIAN GARO KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL
RANKED AMONGST THE HIGHEST PREFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE



SIÈGE SOCIAL: 9280 BOUL. DE L'ACADIE, MONTREAL QC H4N 3C5
PAVILLON: 2500 RUE DES NATIONS #102, SAINT-LAURENT, QC H4R 3J9